

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱՁԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ

Անիշխանականները Աւստրիոյ Էլիզապէթ կայսրուհին հազարապետութեան մոլեգնութիւնը կը ճարակի: Բարի՜ փորձ մը եղաւ Պարսից Շահին վրայ, Պելժիգա՛ Անգլիոյ զահաժառանգին վրայ գնտակ մը արձակուեցաւ, Սեւասթաքոլ՝ երիտասարդ մը ձերբակալուեցաւ այն պահուն երբ կ'աշխատէր ականի մը պատրաստութեանը որպէս զի Չարը օղբ հանէ Լիվատիա գացած պահուն, կին մը քանի մը օր առաջ Վիլհելմ կայսրը սպաննել փորձեց: Արքայաօպանութեան հովը որ կը փչէ, այժմէութիւն կուտայ տեսութեան մը զոր մեծանուն ռուս վիպասանը Թոլսթոյ հրատարակեց Ուսպերթօյի մահուանը առթիւ: Այդ յօդուածը իր շահեկանութիւնը պիտի ունենայ հայ ընթերցողներուն համար ուստի ամբողջապէս կը հրատարակենք:

* *

Երբ թագաւորները զատուելէ ետքը կը սպաննուին, ինչպէս Չարլզ Ա, Լուի Ժ-Չ կամ Մաքսիմիլիէն, երբոր պալատի յեղափոխութեան մը զոհ կ'երթան, ինչպէս Պետրոս Գ, Պողոս եւ շատ մը շահեր, խաներ ու սուլթաններ, քովորութիւն է լռութիւն պահել այդ սպանութեանց շուրջը: Բայց երբոր միապետ մը կը սպաննուի՝ ինչպէս Հանրի Դ, Ալեքսանտր Բ, Աւստրիոյ կայսրուհին, Պարսից շահը և այս օրերո Ուսպերթօ թագաւորը՝ առանց նախապէս ո և է գատական ձեւակերպութեան կամ պալատական դաւադրութեան, ան ատեն թագաւորները, կայսրերը և իրենց ընտանիքները այնչափ ուժով կը զարմանան ու կը զայրանան այս բանաբարութեանն որ կարելի չէ մտքէ անցնել թէ երբեք պատասխանատուութիւն օւնեցած ըլլան մարդու մը մահուանը մէջ, ո՛ր մնաց սպանութիւն հրամայած եւ անկից օգուտ քաղած ըլլան: Եւ սակայն իրենցմէ էն լաւերը, ինչպէս Ալեքսանտր Բ և Ուսպերթօ, ուղղակի գործով մը պատճառ եղած կամ

իրենց մեղսակցութեամբը քաջալեր կարդացած են բնութարար մարդերու շարքին սրոնք ինկած են պատերազմի դաշտերուն վրայ, — առանց հաշուելու ոստիկանական դրութեան զօհերը: Իսկ իրենցմէ անոնք որ բարոյական յատկութիւններով նշանաւոր հանդիսացած չեն, հարիւր հազարներով, միլիոններով կը հաշուուին սպանութիւնները որոնց մեղքը իրենց ճիտին վրայ կը ծանրանայ: Քրիստոս դատաւարտեցակն ընդ ական, ատամն ընդ ատամանի օրէնքը. բայց ատիկա տակաւին կանոնն է այս բոլոր մարդերուն, որոնք կատաղօրէն ի գործ կը դնեն զայն, կա՛մ պատերազմ ընելով, կա՛մ ըմբոսաներ պատժելով: Երբեմն նոյն իսկ աւելի առաջ կ'երթան եւ պատերազմ կը հրատարակեն, այսինքն հազարներով մարդերու մահը կը վճեն, առանց ո և է շարժառիթի: Ուստի իրաւունք չունին զայրանալու երբոր դիպուածաւ մէկը իրենց դէմ ի գործ կը դնէ օրէնքը զոր իրենց աշխարհի կը հարկադրեն: Թագաւոր մը կամ կայսր մը հազիւ թէ իր մահուամբը քաւէ սպանութիւնը հարիւր հազար կասգօւցէ մէկ միլիոն մարդու, սրոնք վեհապետներու հրամանովը կամ հաւանութեամբը կոտորուած են: Թող ուրեմն այս վերջինները զաղրին զայրանալէ երբոր իրենցմէ մէկը, Ալեքսանտր Բ կամ Ուսպերթօ, մարդասպանի մը հարուածին տակ կ'իյնայ: Ընդհակառակը թող զարմանան որ այսօրինակ գործեր այնչափ հազուադէպ են աշխարհի մը մէջ ուր ամէնքը համաձայն են մարդասպանութեան մշտական օրինակը ընծայելու:

Մարդիկ այնչափ իբնոսացած են որ ամէն օր իրենց աչքին տակ անցած դարձածին բուն իմաստը չեն ըմբռներ: Կը տեսնեն թէ թագաւորները, կայսրերը եւ նախագահները ի՞նչ հօգածութեամբ կը հսկեն քաջամարդ բանակներու կազմակերպութեանը, ու կը բազմապատկեն զօրահանդէսները, ռազմափորձերը, ջանալով իրար զարմացնել այս ցուցադրութիւններով: Ու, եռանդով վառուած, ահա խումբ խումբ կը վազեն կ'երթան տեսնելու թէ ի՞նչպէս իրենց եղբայրները, շողշողուն ու խայտաբղէտ հազուստներ հագած ծաղրելիօրէն, մեքենաներու կը փոխուին ի ձայն փողօյ եւ թմբկի, ու, մեծաւորի մը արձակած աղաղակին վրայ, ամէնքը մէկ անց նոյն շարժումը կը կատարեն: Հանդիսատեսներէն ո՛չ մէկը կը հասկնայ թէ այս ամէնը ի՞նչ կը նշանակէ: Եւ սակայն

իմաստը շատ պարզ ու շատ պայծառ է: Ատիկա ու ըիշ բան չէ բայց եթէ մարդասպանութեան պատրաստութիւն:

Այդ միջոցներով կ'աշխատին մարդիկը ապուշցնել զանոնք սպանութեան գործիքներու վերածելու համար: Ու անոնք որ այս գործին կը նուիրեն իրենք զիրենք եւ ատով կը փառաւորուին, միմիայն թագաւորները, կայսրերը ու նախագահներն են: Սպանութիւնը զբաղում և արհեստ կ'ընեն: Զինուորական համազգեստ կը կրեն միշտ, թուրերնին քովերնէն կախած: Բայց իրենցմէ մին սպաննուելուն պէս՝ կը զայրանան ու կը կանչուրտան:

Թագաւորի մը սպանութիւնը, օրինակի համար Ումպերթոյինը, չըլլալիք կերպով անգութ գործ մը չէ սակայն: Թագաւորներու և կայսրերու հրամայած տնօրինութիւնները—անցեալին մէջ Սէն-Պարթէլըմին, կրօնական շարժառիթներով եղած ջարդերը, զեղացիներու ապստամբութեանց նուաճումը, Վերսալի սպանութիւնները—այսօր ալ տանջանքները, մենաւոր բանտի մը խօրը կամ զգաստութեան շոկատներու մէջ հատնումը, կախաղանը, զլխատութիւնը, հրացանի բռնելները, արիւնալի պատերազմները—անբաղկատելի կերպով աւելի անգութ են քան անիշխանականներու գործած սպանութիւնները: Նոյնպէս կարելի չէ ըսել թէ այս սպանութիւնները մասնաւորապէս սոսկալի են՝ որովհետեւ արգարացում չունին: Եթէ Ալեքսանտր Բ և Ումպերթօ մահուան արժանի չէին, Բլէկլայի պատնէշներուն տակ ինչ կ'ած հազարաւոր Ռուսերը և Հապէշիտան ինչ կ'ած իտալացիներն ալ բնաւ արժանի չէին մահուան: Վեհապետներու դէմ սպանութեան արարքները սոսկալի են, շիտակ է. բայց ո՛չ իրենց անգթութեամբը ո՛չ ալ շարժառիթներու բացակայութեամբն է որ սոսկալի են, հապա իրենց հեղինակներուն խնդրութեամբը:

Եթէ թագաւորի մը սպանիչը իր ոճիւրը գործէ՝ կ'ա՛մ մղուած զայրոյթի անձնական զգացումէ մը զօր առաջ բերած է հարստահարուած ժողովրդի մը թշուառութիւնը որուն պատասխանատու կը թուին իրեն Ալեքսանտր, Գառնօ կամ Ումպերթօ, կամ մղուած վրիժառութեան անձնական զգացումէ մը, իր արարքը, որչափ ալ անբարոյական ըլլայ, գոնէ բացատրելի է: Բայց մարդերու ընկերակցութիւն մը—անիշխանականներու խումբ մը, ինչպէս կ'ըսեն այսօր—ինչպէս կը շատանայ, Պրէսի մը զինելէ յետոյ, ուրիշ վեհապետի մը սպանալով, և մարդկութեան վիճակին բարելաւութեանը համար չի կրնար ուրիշ բան գտնել բայց եթէ մարդիկ սպաննել, մանաւանդ երբ այնքան անօգուտ է այդ մարդիկը սպաննել որքան զուր էր Հիդրային զուրկը կտրել՝ քանի որ միշտ ուրիշ զուրկ կը վերածնէր: Արդէն շատոնց ի վեր, թագաւորները և կայսրերը ի նպաստ իրենց բանիլ կուտան սարուածք մը որ զրեթէ նման է բազմհարուածեան հրացա-

նի մը օարուածքին, փամփուշտ մը ցատքելուն պէս, ուրիշ մը տեղը կը բռնէ: Թագաւորը մեռաւ, կեցցէ՛ թագաւորը: Ի՞նչ օգուտ ունի թագաւոր մը սպաննել:

Գործերը շատ հարևանցի գատել է կարծելը թէ այդ մարդոց սպանութիւնը կրնայ ծաւալել ժողովուրդները ազատագրելու, եւ այսուհետեւ արգիլելու ո եւ է մահառիթ պատերազմ:

Յեշելու է թէ ճշոււմ և պատերազմ եղած է կառավարութեան ամէն պետերու ներքեւ, ո՛վ որ ալ ըլլան, Նիքոլա և Ալեքսանտր, Ֆրէտէրիք ու Վիլհելմ, Նաբոլէոն, Լուի, Բալմէրոզըն, Կլաուսզըն, Մաքս-Քինլի և այլն ...: Այդ մարդիկը հետեաբար պատճառ չեն հարստահարութեանց և պատերազմներուն որոնցմէ կը տառապին ժողովուրդները: Մարդոց զժբաղդութիւնը մէկ քանի կղզիացեալ անձնաւորութեանց մասնաւոր ազդեցութենէն առաջ չի՛ գար, հապա ընկերային կազմակերպութենէն որ մարդիկը այնպէս իրարու կը կապէ որ ամէնքը մէկէն մէկ քանիին կամ մէկու մը տրամադրութեանը տակ կը զբտնուին, ու այդ մէկ քանին կամ մէկը այն աստիճան ապականուած են միլիոնաւոր մարդերու ճակատագրին եւ կեանքին վրայ իրենց ունեցած հակաբնական տիրապետութենէն, որ ախտաւոր վիճակի մը նշանները ցոյց կուտան և մեծամոլութենէ բռնուած են, ճշմարիտ խելագարութիւն զոր իրենց բացառիկ կացութիւնը միայն կը սքօզէ:

Այդ մարդիկը, իրենց տղայութենէն մինչեւ մահը, շրջապատուած են ամէնէն յիմար պերճանքով և ստույթեան ու ստրկութեան մնայուն մթնոլորտով մը: Իրենց ամբողջ դաստիարակութիւնը, իրենց ամբողջ զբաղումը ուրիշ բան չէ բայց եթէ ուսումնասիրել անցեալին մէջ գործուած սպանութիւնները, սպանութեան ամէնէն անվրէպ գործիքները որ ունինք այսօր, կոտորածները պատրաստելու լաւագոյն միջոցները: Տղայութենէ ի վեր, սպանութիւնը կ'ուսումնասիրեն իր ամէն ձեւերուն տակ, մահառիթ զէնքեր, թուրեր կը կրեն միշտ, ամէն տեսակ համազգեստներ կը հագնին, զօրահանդէսներ, ռազմափորձեր կը կազմակերպեն: Եւ սակայն ոչ ոք իրենց կ'ըսէ թէ ճշդիւ ի՞նչպէս որակելու է իրենց գործերը, ո՛չ ոք իրենց կ'ըսէ թէ ամօթ ու ոճիր է սպանութիւններ պատրաստելու ընդհակառակը, իրենց չորս կողմը ուրիշ բան չեն լսեր բայց եթէ խանդավառ քաջալերանքներ՝ իրենց ընթացքին մէջ յարատեւելու: Ամէն անգամ որ զօրահանդէսի մը համար դուրս կ'ելլեն, ամբողջ խանդավառութեամբ կ'ընդունի զիրենք, և աղաղակները զոր կը յարուցանեն իրենց ճաճուն վրայ ամբողջ ժողովրդին գոհունակութիւնը արտայայտել կը թուին իրենց: Մէկ քանի լրացիւրները զօրոնք կը կարգան, կարծելով որ անոնց մէջ պիտի գտնեն ընդհանուր կարծիքը կամ գոնէ ամէնէն նշանաւոր մարդերու կարծիքը, օտրկօրէն կը փառաբանեն իրենց խօսքերը եւ գործերը, ի՞նչ ալ ըլլայ ամենց յիս

մարութիւնը կամ շարութիւնը: Չիրենք շրջապատող բոլոր մարդիկը, էրիկմարդ, կին, աշխարհական ու կրօնաւոր, առանց հոգ ընելու իրենց արժանապատուութիւնը, իրար գերազանցել կը նկրտին՝ շողոքորթութեան մասին, իրենց ամենադոյզն խօսքերուն կը հաւանին, ամէն բանի մասին կը խաբեն զիրենք, և իրտկանութիւնը նշմարելու ամէն միջոց կը խաբանեն իրենց առջեւ: Այդ մարդիկը հարիւր տարի ալ ապրին, ազատ մարդ մը պիտի չտեսնեն երբեք, ճշմարիտ խօսք մը պիտի չլսեն բնաւ: Իրենց խօսքերը եւ գործերը երբեմն զգուանքով կը լեցնեն մեզ: Կը բաւէ սակայն խորհիլ իրենց կացութեանը՝ հասկնալու համար թէ իրենց տեղը ամէն մարդ բացարձակապէս նոյնը պիտի ընէր: Քանսուր մարդ մը եթէ իրենց տեղը ըլլար՝ ուրիշ բանաւոր ընթացք մը չէր կրնար ունենալ բայց եթէ անմիջապէս հրաժարիլ իր կացութենէն: Այդ կացութեան մէջ մնալ ուզելուն պէս, ինքզինքը պիտի դատապարտէր անոնց նմանելու:

Ինչ կ'ուզէք որ ըլլայ Վիլհելմի մը գլխուն մէջ, — այդ սահմանափակ, ջիւղ զարգացած և սնափառ մարդուն, որուն ամբողջ իտէալը գերմանացի գեղջուկ ազնուականի մը իտէալն է, — քանի որ իր բերնէն ելած ամէն յիմարութիւն ու ցածութիւն խանդավառ հոգիներ առաջ կը բերէ, և, վերին աստիճանի կարեւոր բանի մը պէս, տրեւելիք բան մը մտնուի մեկնութեանցը տեղի կուտայ: Կ'ըսէ՞ մի որ զինուորները մինչեւ իսկ հայրերնին սպաննելու են՝ իրեն հնազանդելու համար, — ամէն մարդ հուրբա կը պոռայ: Կ'ըսէ՞ մի որ երկաթեայ ձեռք մը Աւետարանին օգնելու է աշխարհի տիրապետելու, — հուրբա: Կ'ըսէ՞ մի որ Չինաստան գացող զօրքերը պէտք է ամէն բան ջարդեն և գերի չընեն, — զինքը զգաստարան մը չեն դըններ, հապա հուրբա կը պոռան և դէպի Չինաստան կը փութան՝ իր հրամանները կատարելու: Կամ թէ Նիքոլայ Բ մըն է, աւելի քաղցր բնաւորութեամբ, որ իր տիրապետութիւնը կը սկսի՝ իրենց յատուկ գործերը իրենք կարգադրել սուրբ պատուաւոր ծերունիներու յայտարարելով թէ ազատութիւնը յիմար երազ մըն է. և մամուլը, զինքը շրջապատող մարդիկը գովեստը բերնբրնէն վար չեն ձգեր այս մասին: Տիեզերական, խաղաղութեան տղայական, այլանդակ ու ստապատիր ծրագիր մը կը ներկայացնէ, ու միևնոյն ատեն միջոցներ ձեռք կ'առնէ իր բանակին թիւր աւելցնելու ու իր իմաստութիւնը և առաջնութիւնը անչափօրէն կը դրուատեն: Առանց ո և է պատճառի, անօգուտ, անողոք կերպով, կը վիրաւորէ ու տանջէ ամբողջ ժողովուրդ մը — Ֆինլանտացիները. իր չորս կողմը ուրիշ բան չի տեսներ դարձեալ բայց եթէ հաւանութիւններ: Վերջապէս, Չինաստանի ջարդերը կը կազմակերպէ, որոնք մարդօ կը կատղեցնեն իրենց անարդարութեամբը, անգթութեամբը և տիեզերական խաղաղութեան նորոգ ծրագրին հետ իրենց հակասութեամբը, և ամէն կողմէ գովեստ կը շաղկեն իրեն՝ մի-

անգամայն իր զինուորական յաղթանակներուն և իր հօրը խաղաղասիրական աշխարհավարութիւնը շարունակելուն համար:

Իրօք ինչ կ'ուզէք որ ըլլայ այս մարդոցը գլխուն ու որտին մէջ:

Այսպէս ուրեմն ժողովուրդներուն հարստահարութեան և կոտորածին բուն մեղապարտները Ալեքսանտրները, Ուսպերթները, Վիլհելմները, Նիքոլաները և Չամպլըլէները չեն, հապա անոնք որ զիրենք այդ մարդկային կեանքին բացարձակ տիրոջ դիրքին մէջ դրած են կամ կը պահեն: Ուստի անօգուտ է Ալեքսանտրները, Նիքոլաները, Վիլհելմները և Ուսպերթները սպաննել. պէտք եղածը՝ դադրիլն է այժ տալէ ընկերային կազմակերպութեան որ զանոնք առաջ կը բերէ: Եւ ընկերային արդի կազմակերպութիւնը բունողը՝ մարդոց եսասիրութիւնն ու մոլութիւնն է, որոնք իրենց ազատութիւնը եւ պատիւը կը ծախեն նիւթական խեղճ շահերու համար:

8 օգոստոս 1900 Լ. ԹՈՒՄՐՈՅ

ՄԵՆՔ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ

Տամատ Մահմուտ փաշա որ Եգիպտոս կը գտնուի, բաց նամակով մը հրաւէր կարդացած է Հայոց, իսլամներուն հետ միաբանութեամբ գործել: Լոստոն բարեկամ մը այս առաջարկութեան լուրը հաղորդելով ինծի ուզեց կարծիքս ալ իմանալ:

— Պոլիս շատ անգամ դիտած եմ, պատասխանեցի, որ հիւսիստաւորի մը ընտանիքը երբ կ'ելլեն Եգիպտոս կը դիմէ, հիւանդին մահը շատ չուշանար: Երիտասարդ թիւրքերու պետ մըն ալ երբ Երոպա Հայոց դիմում կ'ընէ, կրնանք զայն կ'ելլեն Եգիպտոս գուրդ ափ առնող մը համարիլ. ապահով ըլլանք որ անոր քաղաքական մահը լուր է: Ուրեմն շատ չանցած Տամատ Մահմուտ փաշա կամ Պոլիս կը վերադառնայ, կամ արտասահման մնալով կ'սկսի սուլթանին արեւադարձութեանը համար աղօթել:

Այս կարծիքը յայտնելէ քիչ ետքը իմացանք որ Տամատ Մահմուտ փաշա արդէն Երևոյի հետ կը բանակցի համաձայնութեան մը պայմաններուն վրայ:

Առաջին անգամը չէ որ Երիտասարդ թիւրքերու պետ մը հայ և թիւրք գործակցութեան մը զաղափարը մեծադորդ շտապիւնով հրապարակ կը նետէ: Հակասութեան նախկին իտլաններուն հետ Հայոց յարաբերութեանց յիշատակութիւնը անշուշտ էլ մը պիտի գրաւէ ժամանակա-

կից մեր պատմութեանը մէջ. անօգուտ չեմ համարիր արձանագրել կարգ մը իրողութիւններ որոնք մասամբ ծանօթ, մասամբ անծանօթ են:

* * *

Չեմ ուզեր վերադառնալ մինչեւ սուլթան Ազիզին օրերը, որ ժամանակ հայեր երիտասարդ թիւրքերուն բարեկամներն ու աշակիցներն էին. աւելի լաւ օրերէն կը սկսիմ:

Պոլիս 1896ի սկիզբները քաղաքական բարեկամներու հետ խորհած էինք, ինչ ինչ նկատուածներով որոնց մասին առ այժմ չեմ ուզեր խօսիլ. մերձեցում մը առաջ բերել հայ յեղափոխականներու և երիտասարդ թիւրքերու միջեւ: Երրոպա մեկնած պահուստ հետո ծրարագիր մը կը բերէի, խորհրդակցութեամբ պատրաստուած: Բարիք հասնելու իմացայ թէ Երիտասարդ թիւրքերու հետ համաձայնութեան մը գաղափարը արդէն հոն ալ ծնունդ առած էր: Հայ երիտասարդներէ ոմանք յարաբերութեան մէջ մտած էին Ռիզա պէիի հետ որ Երիտասարդ թիւրքերուն հեղինակաւոր ներկայացուցիչն էր: Նոյն միջոցին զիշեր մը ժողով պիտի գումարուէր քննելու համար հայ եւ թիւրք միութեան մը պայմանները: Բարեկամներէ ոմանք հրաւերովը ես ալ գացի այդ գումարման, որ կուսակցական հանգամանք չունէր:

Չեմ ու երկարատեւ վիճաբանութիւններէ կարելի եղաւ հասնիլ թէ ընդհանուր փափաք մը կար հայ երիտասարդներուն մէջ, թիւրքերուն հետ համաձայնութեամբ օսմանեան կայսրութիւնը օժտել Աւստրիականին լաւագոյն կազմակերպութեամբ մը, որուն մէջ Հայաստանը Հունգարիոյ տեղը պիտի բռնէր: Պատկանելով քաղաքական որոշ կուսակցութեան մը, ես իրաւունք չունէի այդ ժողովին մէջ որոշ կարծիքներ յայտնել եւ անոնց վրայ պնդել. միայն, փափաքեցայ իմանալ թէ Երիտասարդ թիւրքերուն հետ համաձայնութիւն մը գոյացած պարագային, այդ ժողովականները իրենց տրամադրութեան ներքեւ բարոյական եւ նիւթական ինչ ու ժեր կրնային սնենալ յաջողցնելու համար թիւրքերուն հետ միաբանութեամբ պատրաստուած ծրագրի մը գործադրութիւնը: Հասկցայ թէ բարի տրամադրութիւններէ զուրս ուրիշ ու է ուժի վրայ կոթնելու դիւրութիւն չունէին: Եստ շատ, կը յուսային յեղափոխական կազմակերպեալ մարմինները շահագրգռել իրենց խորհուրդներուն եւ անոնց օգնութեամբ գործել: Անօրուտ համարեցի այլ եւս զբաղիլ այդ մարմինն որոշուածներովը:

Լոնտոն գալէ առաջ փափաքեցայ տեսակցիլ Ռիզա պէիին հետ, որուն անունը արդէն Պոլիս ինձի ծանօթ էր: Չօպանեանին միջոցաւ տեսակցութիւն մը կար գաղտնեցաւ:

Մէշվէրէի խմբագրին հետ տեսակցութիւննիս ևր-

կու ժամ տեկց: Առանց դժուարութեան երկու կողմէն ճանչցանք 'Հայ Յեղափոխականները և Երիտասարդ-թիւրքերու միաբան գործակցութեան մը օգտակարութիւնը, բայց ծրագրի մը վրայ համաձայնութիւնը զժուարին կ'երևար: Տեսայ թէ Ռիզա պէի թիւրքիոյ փրկութեան միակ պայմանը Միտհատ փաշայի Սահմանադրութեան մէջ կը գտնէր: Իր գաղափարները վիճաբանութեան կենթարկելու պէտքը չզգացի: Եթէ մինչեւ իսկ համար կարծիք գտնուէինք Երիտասարդ թիւրքերուն, բայց եւ այնպէս բազմաթիւ տարիներէ յետոյ միայն կարելի էր օսմանեան կայսրութիւնը Սահմանադրութեամբ օժտել, մինչքեւ կարգ մը անմիջական տնօրինութեանց պէտքը չզգալի էր: Ամենուտ շահը հաւասարապէս կը պահանջէր կարգ մը բարեկարգութիւններով ժամանակ շահել տալ երկրին, այսինքն՝ յետաձգել տալ թիւրքիոյ այլ և այլ նահանգներուն քաղաքական կամ տնտեսական գրաւումը եւրոպական պետութեանց կողմէն: Առջևնիդ ատեն սուս նենալով էր որ պիտի կարենայինք աւելի հանդարտօրէն խորհիլ թիւրքիոյ փրկութեանը համար այլ և այլ ծրագրներու վրայ:

Հավցողութեան այս ուղղութեամբ պարզելով, խոստացայ Լոնտոն ժամանելու մեր կեդրոնին հետ խորհրդակցութեամբ աւելի հիմնաւոր բանակցութեանց սկզբնաւորութիւն մը դիւրացնել:

Բարիքէն անմիջապէս մեկնեցայ և հասայ Լոնտոն, ուր մեր կեդրոնէն տեղեկացայ թէ Միզան մեզի հրաւեր կարողացած էր թիւրք յեղափոխականներուն աջ կարկանդակ: Հանրաժանօթ Մուրատ պէի նոյն միջոցներուն Պոլիս իր կարևոր պաշտօնը ձգելով արտասահման փախած էր, ու Երիտասարդ-թիւրքերուն կուսակցութիւնը կը զօրացնէր իր Միզանովը որ Եգիպտոս կը հրատարակուէր: Երբ զեռ Պոլիս էի, Մուրատ պէի Բարիք Ֆիկառոյի խըմբագրի մը հետ իր տեսակցութիւններով նախատած էր հայ ազգը: Ըստ Մուրատ պէիին՝ հայը պարզապէս թիւրքին ծառայելէ զատ ուրիշ առաւելութիւն մը չէր կրնար սնենալ: Եւ ահա հիմակ այդ ամբարտաւան հրապարակագիր-յեղափոխականը ոչ միայն մեր աշակցութիւնը կը հայցէր, այլ եւ նիդակակցութեան մէջ հրամանատարութիւնը մեզի յանձնելու առաջարկութիւնը կը ներկայացնէր: «Կոուիս մէջ հրամայողը զուք եղէք եւ մենք հնազանդինք ձեզի» կը յայտարարէր Միզան մեր կուսակցութեան:

Թիւրքերը հինգ դարէ հեռէ մեծամեծ օգուտներ քաղած են Հայոցմէն, բայց միշտ իբր «խոնարհ ծառայութեան» տուրք մը նկատելով իրենց մատուցուած աշակցութիւնը: Ոչ միայն պաշտօնական շրջանակներու մէջ այլ եւ ազատ յարաբերութեանց ատենն իսկ հայը միշտ իսլամին զգացնել տալու է թէ ինքը հպատակ մըն է: Ահա յանկարծ իսլամը քաղաքական ազատութեան կոուիս մէջ ոչ միայն հայոցն իր հետ հաւասարութեան

սկզբունքը կ'ընդունէր այլ և մինչեւ իսկ մեր գերիշխանութիւնը:

Յեղափոխական կռիւներու մէջ առաջին անգամ ըլլալով Երիտասարդ Թիւրքերը Հայոց ուղղակի դիմում կ'ընէին: Մուրատ պէյին հրաւերը կրնար մեզի մտնել տալ իր նախորդ խրոխտանքը: Անցեալը ինչ որ ալ ըլլար բայց եւ այնպէս Երիտասարդ Թիւրքերուն նոր ընթացքը մեր վրայ շատ փափկանկատութեան պարտականութիւնը կը դնէր: Մեծ զգուշաւորութեանց պէտք կար Թիւրքերը իրենց անձնատիրութեանը մէջ չվիրաւորելու համար:

Երիտասարդ Թիւրքերուն հետ մեր յարաբերութեանց խնդիրը յընդմեջ ճննելու համար հարկ տեսնուեցաւ սպասել ընկերներէն ումանց Լոնտոն ժամանումին:

Ապրիլի սկիզբները, 1896ին, այս խնդիրը նկատողութեան առնուեցաւ: Բիզա պէյ ֆրանսերէն նամակով մը կը պարզէր Երիտասարդ Թիւրքերուն առաջարկները, որոնք մեր միաբան գործակցութեան ծրագիրը պիտի կազմէին: Միևնոյն ժամանակ զրկած էր նաև հայերէն տաներով բայց թրքերէն լեզուով ինքնագիր բանի մը սիրուն տող, այցաբարտի մը վրայ:

Իսլամ կուսակցապետը իր նամակովը կը պաշտպանէր Միտհաթեան Սահմանադրութեան գաղափարը, որ եթէ մենէ ընդունելութիւն գտնէր, Բիզա պէյ անձամբ Լոնտոն պիտի դար մանրամասնութեանց բանակցութիւններուն համար: Մենք սակայն այդ առաջարկներուն ո՛չ հաստատական, ո՛չ մերժողական պատասխան մը տալ որոշեցինք: Երիտասարդ Թիւրքերուն հետ միասին օտմանեան կայտորութեան կացութիւնը հիմնովին ճննելէ ետոյ ծրագիր մը պատրաստելը աւելի նպատակայարմար համարեցինք: Էլ մեր այս համոզումները ընդարձակօրէն բացատրելու համար հարկ տեսնուեցաւ մենէ մէկը անձամբ Բարիզ զրկել: Այս պաշտօնը յանձնուեցաւ Կեղրոնի անդամներէն Պ. Սուրէն Սուրէնեանին, որ յաջորդ օրը իսկ Բարիզ գնաց, եւ Բիզա պէյին ու ընկերներուն հետ տեսակցելէ յետոյ երեք օրէն վերադարձաւ:

Նոյն օրերը ներքին խնդիրներ ծագելով, այլ եւս մտոցուեցաւ Երիտասարդ Թիւրքերուն հետ յարաբերութեանց գործը:

* *

Երբ 1896 յունիսին Բարիզ վերադարձայ, տեսայ թէ ֆրանսական շրջանակներու մէջ ալ մեծ յառաջիմութիւն ըրած է Հայ եւ Թիւրք համաձայնութեան մը գաղափարը, յատկապէս Պ. Գլէմանտի պաշտպանութեամբ: Այդ միջոցին Բիզա պէյ անցած էր Լոնտոն, ուր Անգլիոյ քաղաքական անձնաւորութեանց աջակցութիւնը խնդրած էր Երիտասարդ Թիւրքերու դատին: Իրեն, կարծեմ, խորհուրդ տրուած էր Հայոց հետ համաձայնել, վասն

զի վերադարձին Չօպանեանի հետ տեսակցութեամբ մը փափաքեցաւ մեզի հետ բանակցութեանց վերսկսումին: Չօպանեան այս առաջարկը ինծի հաղորդեց: Օգոստոսին մեր ընդհանուր ժողովը պիտի գումարուէր Լոնտոն, ուստի Երիտասարդ Թիւրքերու հետ համաձայնութեան ծրագիրը մը կրնայինք պատրաստել եւ ներկայացնել ժողովին: Պատգամաւորներէն միայն Պ. Ռշտունի Լոնտոն կը գտնուէր այդ ժամանակ. իրմէն խնդրեցի Բարիզ գալ, եւ եկաւ:

Չօպանեանի միջնորդութեամբ գումարում մը կարգադրուեցաւ, որուն ներկայ կը գտնուէին մեր կուսակցութեան ուղղակի շպատկանողներ եւս:

Օգոստոսի սկիզբը մենք ճիշտ ատենին ժամադրավայրը գտնուեցանք: Միւս կողմէն եկաւ նախ Մուրատ պէյ, որուն ծանօթացանք Պ. Ռշտունիի միջոցաւ: Միգանի խմբագրին հետ քովէ քով նստած էինք: Մէկէն ի մէկ շատ զէջ գաղափար մը կազմեցի այդ հոշակաւոր հրատարակագրին ընկերատիրական հոգիին վրայ: Խօսակցութեան մը պահուն հետեւալ յայտարարութիւնը ըրաւ իր ընկերակիցներուն համար.

— Անոնք թիւրք են, ի՞նչ կը հասկնան քաղաքական խնդիրներէ եւ վարչական գործերէ. ես անոնց պէս չեմ, վասն զի Տաղստանցի եմ:

«Թիւրք» անունը արհամարհական ուժգին շեշտով մը արտասանեց: Ապշած մնացի: Մենք հայ և քրիստոնեայ, իրենք իսլամ եւ մենէ տարբեր ցեղերու պատկանողներ, ներքի՞ էր Երիտասարդ-Թիւրքի մը առաջին տեսակցութեան մը մէջ—նոյն իսկ բազմաթիւ տեսակցութիւններէ ետքն ալ—մեր առջեւ արհամարհանքով խօսիլ իր ընկերակիցներուն վրայ: Բնականաբար այդ արհամարական յայտարարութիւնը կրնայինք ապացոյց մը համարել Երիտասարդ-Թիւրքերուն միջեւ ներքին զրժտութեանց: Ուրեմն շատ զգուշաւորական ընթացք մը պարտաւորիչ էր:

Հետզհետէ եկան Բիզա պէյ եւ օւրիշ երեք երիտասարդ եւս: Մենք հայերս ալ թուով հինգ էինք: Տեսակցութիւննիս շատ քաղաքավարական եղաւ եւ յարգալիր: Բայց շուտով անդրադարձանք թէ համաձայնութիւն մը անկարելի պիտի ըլլար: Մենք գործնական կողմնի մը վրայ կը մնայինք, իսկ Երիտասարդ-Թիւրքերուն պահանջը շուտով անիրականալի կը նկատէինք. ու ամէն պարագայի մէջ, մեր ձեռնհասութենէն վեր էր անոնց զոհացում տալ: Կը փափաքէին որ միաբանինք եւ Միտհաթեան Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջենք, միանգամայն յայտարարելով որ հայ ազգը ինքնավար Հայաստանի մը պահանջումէն կը հրաժարի: Մեր պատասխանը եղաւ « Հայաստանի ինքնավարութեան դատարարող Հայ ազգին սեփականութիւնն է: Ո՛չ պատրիարքը, ո՛չ Ազգային Ժողովը, ո՛չ ո և է կուսակցութիւն իրաւունք ունի, առանց ամբողջ ազգէն արտօնուելու, յանուն ազ-

զին այդ դատին հակառակող ո՛ր և է յանձնառութեան ներքև մտնել: Մենք կուսակցութիւն մըն ենք, եւ մեր իրաւասութեան շրջանակին մէջ կրնանք խօսիլ միայն:»

Գալով Միտհատի Սահմանադրութեան, յայտարարեցինք որ եթէ մինչեւ իսկ անով գոհանալ ուզէինք, ինչպէս կարելի էր մեր խորհուրդները իրականացնել, քանի որ սուլթանը ինք ջնջած է այդ սահմանադրութիւնը: Որպէս զի հնարաւոր ըլլայ օսմանեան սահմանադրութիւնը վերակենդանացնել, հարկ է նախ եւ առաջ սուլթանը չէզոքացնել:

Տեսանք թէ Երիտասարդ Թիւրքերը կ'ըմբոստանային սուլթանը չէզոքացնելու գաղափարին դէմ: Ինչ միջոցներով ուրեմն կը յուսային իրենց նպատակին հասնիլ, մեր աջակցութիւնը վայելելով իսկ: Այս հարցումին ո եւ է լուրջ պատասխան տալու անկարող գտնուեցան:

Մենք իրենց յայտարարեցինք թէ առ այժմ պէտք է բաւական համարիլ բարենորոգումներու այնպիսի ծրագիր մը որ թէ՛ Հայոց եւ թէ՛ Թիւրքերուն համար հաւասարակ ոգտակար նկատուի, եւ որուն գործադրութիւնը առանց մեծամեծ ցնցումներու իրականացնել յուսալի ըլլայ:

Իրարմէ բաժնուեցանք առանց ո՛ր և է վերջնական կարգադրութեան մը:

Գահիրէ, ՊՏԻ սկիզբները, պատեհութիւն ունեցայ տեսակցիլ երկու Երիտասարդ Թիւրքերու հետ, որոնցմէ մին Բարիզ մեր գումարման ներկայ գտնուած էր: Իրենց յայտնեցի թէ իմ կողմէս չէի կրնար մեր կուսակցութեան ո՛ր և է առաջարկ ներկայացնել մինչեւ որ իրենք, Երիտասարդ Թիւրքերը, չներկայանան զօրեղ և վստահելի կազմակերպութեամբ մը:

Կարծիքներու փոխանակութեամբ քանի մը կարգադրութիւններ ըրինք: Քիչ ետքը երկու Երիտասարդ Թիւրք մեկնեցան Եւրոպա, եւ իրենց առաջին նամակները որոնք յուտալիւր կը թուէին, հասան Գահիրէ բարեկամի մը: Յետոյ այլ եւս ո՛ր և է ձայն ձուն չլսեցինք: Միայն իմացայ թէ Գահիրէ տեսած անձերէս մին զեօպանատան մը մէջ պաշտօն ստանձնած է:

Այս տարի եւս համաձայնութեան մը առաջարկները ներկայացան, բայց վստահելի ո՛ր և է մարմին չտեսնելով մեր դէմը բնականաբար չէինք կրնար պաշտօնական յարաբերութեանց մէջ մտնել:

Մինչեւ հիմակ մէկ Երիտասարդ Թիւրք մը միայն, Ռիզա պէյ, գտնուեցաւ որ իր բարոյականովը վստահութիւն կը ներշնչէ: Մեր փոխադարձ համոզումները ինչ որ ալ ըլլան, նոյն իսկ քաղաքական հակառակութեանց պարագային մէջ ալ, ընդունելու ենք որ Մէշկէրեթի խմբագիրը պարկեշտ Հայրենասէր մըն է, որուն հետ կըրնանք թշնամանալ, բայց զոր չենք կրնար արհամարհել:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Երբեմն երբեմն Պոլսոյ օրագրողի յիշումներու կը վերագրանամ: Իրենց պարզ իրականութեանը մէջ անոնք կրնան Ժամանցի տեղ բռնել:

Գրաքննութեան Մայր-Հայրենիքին մէջ, Ռուսաստան, օրագրողները օրինաւոր հսկողութեան ներքեւ են, իսկ Պոլիս բնակչութիւնն ալ աշարճարբա է: Եւ նիշերինքը ջնջուեցան, բայց ոչ Ենիշերիական բարեբեր օրագրութիւնը այս ճշմարտութիւնը իր դասն փորձառութեամբ ամէն օր կը հաստատէ:

Հայ լրագիրներուն վրայ խօսիմ միայն. ահա ինչպէս կազմակերպուած է մեր գրաքննութիւնը:

Դուրը Ներքին Գործերու պաշտօնատան մէջ տպագրողական տեսչութեան սենեակ մը կայ, ուր երեք հայ ալ հայ մամուլին վերակեցուններն են: Ասոնցմէ մին ամէն օր խմբագրատունները այցելելով կը կարգայ հրատարակուելիք թերթին փորձերը. ինչ որ ուզէ կը ջնջէ, ինչ որ ուզէ կը թողու: Սրբագրութիւնները ընելէն վերջը կը ստորտղթէ երեսները, որով արտօնած կ'ըլլայ թերթին տպագրութիւնը: Ըստ ուղիղ բանականութեան, խմբագրութիւնը այլ եւս ազատ մնալու էր ո՛ր և է վտանգէ, բայց զեռ ծայրն ենք քննութեանց ծրարոցին:

Երբ թերթ մը կը տպագրուի, հինգ օրինակ կը ղըրկուի տպագրական տեսչութեան գրասենեակը, հոն նրատող երկու հայ պաշտօնեաներն ալ պարտաւոր են զայն ամբողջապէս կարդալ, տեսնելու համար թէ ո՛ր և է կէտ մը արդեօք սպրդած է իրենց այցելու պաշտօնակցին աչքերէն: Ու այդ գրաքննիչներէն մին թերթին պարունակութիւնը կը համառօտէ թրքերէն: Եթէ ո՛ր և է զիտողութեան կէտ մը չի կայ հոս կը վերջանայ Հայկական հրատարակութիւնը, և թրքականը կը սկսի:

Թրքեւար ամփոփումը կը ներկայացուի տպագրական տեսչի օգնականին, որ կարգալէ յետոյ կ'անցընէ տեսուչին: Տեսուչէն կը ղրկուի Ներքին գործերու խորհրդակալին, անկէ՛ Ներքին գործերու նախարարին, որմէն նոյն իրիկունը իսկ սատրագամին՝ Էսկիսան կ'իյնայ: Այս հինգ պաշտօնատարներէն որը որ «նիւթերու ամփոփումին» մէջ իր օւշադրութիւնը գրաւող կէտի մը հանդիպի, ամբողջ յօդուածին թարգմանութիւնը կը հրամայէ: Եթէ թերթը օտարագամին ձեռքը անցնելէն ետքն ալ վտանգի մը չհանդիպի, այլ եւս ապահովեալ է, բայց առժամապէս եւ մասամբ միայն. ուրիշ փորձանքներ զարանակալ կը սպասեն իրեն:

Հանրային կրթութեան պաշտօնատան գրաքննիչը ինքն ալ աչքէ կանցընէ հայ թերթերը, եւ եթէ ուշադրու-

Թինը գրաւող կէտի մը հանդիպի, կը հաղորդէ Դուռը, ուր Ներքին գործերու նախարարութիւնը նկատողութեան կ'անէ իրեն յանձնուած տեղեկագիրը: Գրաքննութիւն մըն ալ Երլտզը կայ, եւ հսկողութիւն մըն ալ ոստիկանատունը: Արդ, Դուռը, Հանրային կրթութեան պաշտօնատունը, Երլտզը, Ոստիկանատունը իրարմէ բոլորովին տարբեր տեսակէտներով կը դիտեն ո՛ր եւ է յօդուած կամ լուր: Ինչ որ մէկուն անվնաս կը թուի, միւսին՝ վտանգաւոր է: Գրեթէ միշտ ոստիկանութեան ձեռնառնելովն է որ օրագրութիւնը տանջուեր է:

Իսկ ոստիկանատան մէջ մասնաւոր դիւան մը չի կար. լրտեսներու, մատնիչներու խմբակ մը մատնանիչ կ'ընէր ո՛ր է լուր կամ յօդուած: Ընդհանրապէս թիւթիւն՝ ճիւղէն էր քիչ շատ կանոնաւոր հսկողութիւն մը ընողը: Անանուն մատնութիւնն ալ գործ կը տեսնէր: Անյայտ մատնիչներ կարծիր կապարով մը կ'ստորագծէին թերթի մը այս ինչ այն ինչ հատուածը եւ կը զրկէին Դուռը կամ ոստիկանատունը:

Պատրիարքարանն ալ մեծապէս օգնեց հայ օրագրութեան կաշկանդումին: Մինչև 1891ի առաջին կէտը հայ մամուլը ազգային գործերու քննադատութեան շափաւոր ազատութիւն մը կը վայելէր: Այս թողտուութեան պատճառն էր քննադատող հայ օրագրութեան մը բացակայութիւնը: Առևտրէ հայերէն միակ օրաթերթն էր. 1890 փետրուարին այդ թերթին վարչութեանէն հեռացած էինք երեք պաշտօնակից, և օրագիրը յանձնուած էր այնպիսի ձեռքերու որոնք կը գողգողային ապտակ մը իջեցնելու: պատրիարք, էֆէնտի, ազնուաշուք ամէնքն ալ ապահով էին թէ Առևտր իրենց ո՛ր է է ձանձրոյթ պիտի չպատճառէր: Մասին հանդէսն ալ գոր գրական բարեկամներու խումբով մը կը խմբագրէինք, 1890ի դեպքերուն հետևանքով դադրեցաւ: Ազգին վարիչները քննադատութեան ենթարկուելու երկիւղէն ազատ կը մնային: Հայրենիքին հիմնարկութիւնը 1891 յուլիսին, խռովեց մեր պաշտօնական ու կէս-պաշտօնական մարմինները, և անոնց հետեւորդները: Ալըգեան պատրիարք սկսաւ Հայրենիքին դէմ Դուռը թաքրիւրներ գրելով ամենամեծ զրժուարութիւններ յարուցանել մեր առջեւը: Պատրիարքէն տրուած օրինակին հետեւելով Հիւանդանոցի խնամակալներ, թաղական խորհուրդներ, վարժարաններու հոգաբարձուներ Դուռը կը վազէին, ոստիկանատունը կը դիմէին կառավարական խտուութիւնները հրաւիրելու համար քննադատող թերթին դէմ:

Բազմաթիւ դեպքերէն հատ մը յիշեմ գաղափար մը տալու համար թէ գրաքննութիւնը որպիսի սարկութեան մէջ կը պահէ հայ մամուլը:

Պոլսոյ Սամաթիա թաղը դպրոցական խնդիր մը ծագած էր: Վարժուհի մը պահելու կամ չպահելու համար Սամաթիա տակնուվրայ էր: Կիրակի օր մը գուժարուներ տեղի կ'ունենան, ժողովրդէն պատշաճ մատուցելու կը կարգուին բանակցութիւններ կատարելու համար:

Միևնոյն պահուն ալ տպագրական տեսուչը իր մօրուքը, մագերը փոքրելու պէտքը կը գգայ: Վարսա՝ միւրան Սամաթիացի հայ մըն է, եւ մեր բազմէն ալ, Հայրենիքի պաշտպանած դատին հակառակող կուսակցութեան կը պատկանի եղբր: Մկրատը տեսուչին գրտուն մը պատուցուցած պահուն, սափրիչը ձեռքի գողգողահարութիւնն կունենայ:

—Ատ ի՞նչ է վարպետ, ձեռքդ ա՛լ չի բռներ. ծերացն՛ր ես, կը հարցնէ տեսուչը:

—Ա՛խ էֆէնտիս, տէրտո ընտմը ըսեմ. խելքս վրաս չէ որ ձեռքերս ալ չի դողղան, կը պատասխանէ կեղծ գողգողահարը:

—Ի՞նչ ունիս որ:

—Ի՞նչ պիտի ունենամ. Երբ ես այս տեղն եմ, ո՞վ գիտէ թէ անդին հիմակ ընտանիքս, զաւակներս ո՞ղջ են թէ մեռած:

—Ի՞նչ կ'ըսեո, վարպետ, ի՞նչ կայ:

—Ի՞նչ պիտի ըլլայ որ. դպրոցի մը խնդիր ունինք.

Աստուած պէլան տայ ան Հայրենիք դադէթային. ժողովուրդը տակնուվրայ ըրաւ, հիմակ Սամաթիա կրակի մէջ է. ամէնքը իրար կուտեն կսր: Իմ ձեռքս չգողայ, որո՞նք դողայ:

—Ատ է մի. հոգդ մի՛ ըներ. վաղը այդ գործը կը կարգադրեմ:

—Աստուած կեանք տայ էֆէնտիս, ըսելով, սափրիչը տեսուչին քղանցքը կը պագնէ, և ամբացած ձեռքերով գործը կը տեսնէ:

Երկուշաբթի առտու մեղի հրահանգ եկաւ, ա՛լ բան մը չգրել Սամաթիոյ դպրոցի խնդիրներուն վրայ: Իսկ անդին սափրիչն ալ կը պարծենար թէ «խտէ մարդուն հախէն ասանկ կուգամ»:

Սակայն խտութիւնը օրքան աւելի կը սաստկանար, թշնամիները որքան աւելի կը շրջապատէին մեզի, ժողովուրդն ալ այնքան աւելի ուժգին կը գրկէր Հայրենիքը: Կարծեա թէ ազգին և մեր միջեւ ծածուկ լեզու մը ըստեղծուած էր, սրտի լեզուն, որով իրար կը հասկնայինք, անզօրութեան դատապարտելով գրաքննութիւնը և մեր թշնամիները: Հայրենիքին ամէն մէկ յօդուածը, խորհրդաւոր նշանակութիւններով կը մեկնուէր: Հայը հայուն կը փոփօսար,

—Այս օրուան Հայրենիքը կարդացի՛ր:

—Կարդացի: Սո՛ւս:

Կովկասցի գրող մը որ այդ միջոցին Պոլիս կը գրտնուէր, Սըլանտիտ ինձի ծանօթացաւ, եւ Պոլսոյ օրագրութեան վրայ մեր խօսակցութեանց մէջ հարցուց:

—Խնդրեմ ինձ ալ ասացէք թէ ի՞նչ է հրատարակում Հայրենիքը. տասն օր է այս քաղաքումս եմ, եւ ամէնքից լսում եմ «Հայրենիք կարդացի՛ք, Հայրենիք կարդացի՛ք»: Ամէն օր կարդում եմ, եւ ոչինչ չեմ գտնում: Ախր ի՞նչ պան է օս:

— Ինչ կրնամ ըսել, պարոն. ժողովուրդը իր հոգեկան յուզումներուն ազդեցութեան ներքե կը մեկնէ մեր գրածները: Դուք մեր միջնորդութիւն մէջ չէք ապրիր, մեր սրտին հետ չէք կենակցիր ամէն օր որպէս զի հասկնաք:

Բայց պէտք է ըսեմ որ կովկասի մէջ շատ ազէկ ըմբռնուած էր թէ հայ ժողովուրդն ու Հայրենիքը խորհրդաւոր կապերով սրտակցած են իրարու: Թիֆլիսի յետադիմական մասուլը որ մեր թշնամին էր, կը ջանայ եղբր, ինչպէս լսած էի, սուլթանին ծննդեան եւ գահակալութեան առթիւ գրուած յօդուածները շահագործել մեզի դէմ. իբր թէ Պոլսոյ մամուլին մէջ բացառութիւն կազմած ըլլաինք: Կովկասցի խօսակիցս այս խնդրին վրայ ալ խօսք բացաւ:

— Լա՛ւ, ըսաւ, Հայրենիք ժողովրդական թերթ է, խնդրեմ ինչու սուլթանի մասին այդպէս յօդուածներ էք հրատարակում:

— Բայց, պարոն. օրէնք է այդ. ատոնց հրատարակութիւնը թիւրքիոյ ամբողջ մամուլին համար պարտաւորիչ է:

— Բայց դուք չպէտք է հրատարակէք:

— Սակայն թերթը կը ջնջուի, և մենք ալ չեմ գիտեր թէ ո՞ր կը զրկուինք:

— Էհ, այդ ոչինչ:

Քիչ մը վերջը խօսակցութիւննիս Զարահպատակ Հայոց գործերուն վրայ դարձաւ. խօսակցիս կարծիքները հարցուցի Ալեքսանտր Գին վրայ, որ նոր մեռած էր: Յայտարարեց թէ Հայոց շատ փնտաւար եղած է:

— Ինչո՞ւ ուրեմն ձեր մամուլը շաբաթ մը թէ աւելի օն շրջանակներու մէջ հրատարակուեցաւ, մեռնող կայտեր վրայ դրուատական յօդուածներով:

— Ինչ էք ասում, պարոն, ինչ էք ասում. միթէ կարելի է այլիկոյ: Դա օրէնք է, ամէնքին համար պարտաւորիչ:

— Բայց դուք հրատարակելու չէիք:

Մարդուկը ձա՛նը ցածցնելով.

— Բայց, պարոն, և երբ՞ը կը ջնջեն, և մեզ էլ աքսոր կ'ուղարկեն:

— Այդ ոչինչ:

— Ինչպէս թէ այդ ոչինչ:

— Այնպէս ինչպէս դուք մեզի համար կ'ըօտեք:

— Ախր դուք ուրիշ:

Այդ «ախր դուք ուրիշ» օրտէ բղխած բացազանչութիւնը ուրիշ առիթներու մէջ ալ լսելու պատեհութիւնը ունեցած եմ, առանց թեթեամիտ համարելու զայն արտասանողը: Քիչ մը ուշադրութիւն կը բաւէ որպէս զի ըմբռնեց թէ թիւրքիոյ եւ Ռուսիոյ վարչական դրութեանց տարբերութիւնները բանաձեւող բնազդական բացատրութիւնն է «ախր դուք ուրիշ»ը: Ռուսիոյ մէջ կառավարական բռնութիւնները վերջնական և անփոփո-

խելի տնօրինութեանց կը յանգին. թիւրքիոյ մէջ ամէն ինչ առժամայ է: Անդին ոչ ոք կրնայ երևակայել թէ կառավարութեան կողմէն ջնջուած թերթ մը, օրինակ Արճագանքը, օր մը վերաբացման թողտուութիւն կրնայ ստանալ: Իսկ երբ կարծիք յայտնեց թէ Հայրենիքը կրնայ օրին մէկը դարձնալ Պոլիս հրատարակուիլ, միևնոյն խմբագիրներով, ու ազատութեան աւելի նպաստաւոր պայմաններու մէջ, ոչ ոք հաւանականութեան հակառակ կրնայ համարել այսպիսի համոզում մը: Երբ թիֆլիս Հրատարակչական Ընկերութիւն մը կը թաղուի ո՛չ մէկ հայ անոր գերեզմանին վրայ յարութեան յոյսովը կը մխիթարուի. իսկ երբ Պոլիս Միացեալ-Ընկերութեանց վրայ մեռելական կափարիչը կը դրուի, մեզ կը թուի լսել ձայն մը որ կը մրմնջէ «կնքեալ պահեստի շերիմս այս մինչև ցգալուստ Գրիստոսի» թիւրքիոյ մէջ ամէնքս ալ կը հաւատանք հանդերձեալ կեանքի մը, երջանկութեան օրերու վերադարձին: Արևելեան խնդրին դարու մը պատմութիւնը մեզի ներքի կ'ընէ այդ հաւատքը իբր ճշմարտութիւն համարել:

* * *

Պոլսոյ հայ, յոյն, երոպացի, թիւրք օրագրողները եթէ օրին մէկը հատուրի մը մէջ ամփոփեն իրենց այս բռան տարուան գրաքննական յիշատակները, կրնամ ըսել թէ ընդհանուր մարդկային մատենագրութիւնը իր կատակերգութեան, դաւեշտի գլուխ գործոցներուն շարքին մէջ հատ մը եւս պիտի տեսնէ:

Ես հայ օրագրութեամբ կը զբաղիմ: Մենք հայ խմբագիրներս յայտնի, զաղտնի, պաշտօնական ու անպաշտօն գրաքննութիւններու հակոգութեանը ներքե կը զատնուէինք, ինչպէս վերև բացատրեցի: Միշտ պարանի մը վրայ կարծես կը քալէինք. շինալու եւ չլախախուելու համար լարախաղացի մը ճարպիկութեամբ պէտք էր ցատկընտել: Ընդհանրապէս բոլոր թերթերը ողջ առողջ կ'ընթանային, Հայրենիքն էր միայն որ միշտ տեղէ մը կ'իյնար, կը վիրաւորուէր, մինչև որ օր մըն ալ շարգուփշուր եղաւ:

Լոնտոնի միայնութեանս մէջ երբ միացաւ կ'իյնայ այդ 1891-95ի օրագրական կեանքերնիս, օարտուս մը կ'ըզգամ. ու կը զարմանամ թէ ինչպէս կարող եղած ենք դիմանալ: Պատերազմի դաշտին վրայ հրացանաձգութեանց պահուն մարդկային հոգին իր բոլոր տկարութիւններէն կ'ազատագրի կ'ըօեն:

Հիմակ այլ ևս Պոլիս հայօրագրութեանը չեն փակուիք: Ո՞վ ուշադրութիւն կը դարձնէ քննաձեռնութեան դատապարտուած մարմիններու:

Ա. Ա.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Օգուտ քաղելով Բագմալիպի «Գրական Նահատակներ» խմբագրականին, առաջին յօդուածով մը բացատրեցի թէ Պոլսոյ և Թիֆլիսի հայ մամուլը տարիներէ ի վեր է որ բարեյաջող պայմաններու մէջ կ'ապրի: Գլխաւորապէս քաղաքական հանգամանքներն են, ազգին կամ քէն անկախ, որ կ'արդիւնէ հայ մամուլին յառաջիմութիւնը: Հիմակ ալ նկատողութեան կ'առնեմ զրազէտներու նիւթական վիճակին խնդիրը:

* * *

Գրականութիւնը դեռ մեր մէջ արհեստ մը չէ եղած. այսինքն թէ՛ հայ մը ինչպէս վաճառական, գրագիր, նկարիչ, գործաւոր, երաժիշտ, պաշտօնեայ, խոհարար կ'ըլլայ, իր ապրուստը ճարելու ապահովութեամբ, կամ հարստանալու ալ յոյսով, հայ մը կարող չէ գրականութիւնը իրր ասպարէզ ընարել: Գրականութիւնը մեր մէջ կը մնայ ազնուական գեղարուեստ մը որուն ինքզինքը նուիրող հայը պէտք չէ երբեք մտքէն նիւթական ո՛ր է և վարձատրութիւն անցընէ: «Արուեստը Արուեստին» համար խօսք մը կայ. քիչ մը այլափոխելով Գեղեցկագիտութեան այս համբաւաւոր բանաձեւը կրնանք ըսել թէ հայը «Գրականութիւնը Գրականութեան համար» միայն կրնայ ընել: Բա՛րիք մըն է թէ շարիք մը որ հայ միտքը իր հաճոյքին համար միայն ստեղծագործելու դատապարտուի: Ինչ որ ալ ըլլայ, բարիք թէ շարիք, իրականութիւնը այս է:

Ու այս իրականութիւնը Հայոց անընթացասիրութեան անհերքելի ապացոյցը չհամարուիր: Նոյն իսկ այն ազգերուն մէջ որոնք մենէ այլապէս նպաստաւորեալ պայմաններէ շրջապատուած կ'ապրին, գրականութիւնը լայնաբաց, ընդարձակածաւալ ասպարէզ մը չէ ինչպէս, օրինակ, ճարտարագործութիւնը, կամ վաճառականութիւնը: Սակաւաթիւ են անոնք որ ըլլայ Եւրոպա, ըլլայ Ամերիկա, գրականութիւնը արհեստ մը ընելով կրնան հանգիստ ապրիլ. իսկ հարօտացողները մատի վրայ կը համրուին:

Մենք որ մասնաւորապէս ֆրանսական կեանքով կը հետաքրքրուինք, մենք կը կարծենք թէ Ֆրանսացի մատենագիրները ամէնքն ալ եղին ու մեղրին մէջ կ'ապրին: Քանի մը ամիս առաջ Բարիզի մեծ հանդէս մը հրատարակեց Ֆրանսայի գրագէտներուն կացութեան վրայ ընդարձակ ուսումնասիրութիւն մը, որմէն կը տեսնուի թէ գրականութիւնը իր պահանջած մեծամեծ զոհողութեանց փոխարէն շատ չնչին վարձատրութիւն մը կը

հատուցանէ գրագէտներու ամենաստուար մեծամասնութեան:

Գրագէտ ըսելով տնտեսական շնեք հասկնար Ռիչարդսը, Մօնթէրէն մը, Պուակոպէ մը, եւ ասոնց նըմանները որոնք օրագիրներու իրր թերթօն արկածի վէպեր գրելով մեծկակ հարստութիւն դիզած են: Այն մատենագիրները որոնք հոյակապ գործեր կը նուիրեն ժողովրդին, մեծ մասամբ կարող չեն լոկ իրենց գրքերուն արդիւնքովը ապրիլ եւ հարստանալ: Ամէնէն քիչ վաճառուողները բանաստեղծութեանց հատորներն են: Թատրերգութիւն գրողները էն բաղաւորները կրնան համարուիլ, բայց անոնց գրածները ընդհանրապէս գրական մեծ արժանիք մը չունին: Իմաստասէրները, պատմաբանները միշտ աջակցութեանց կարօտ եղած են. իրենց աշխատութիւնները կատարելու համար ուսուցչական պաշտօններ կունենան, գրադարաններու տեսուչ կը կարգուին, եւ այլն: Ուրիշ ազգերու մէջ ալ «մեծ մատենագրութիւնը» հանգիստ կենցաղավարութեան մը ապահովութիւնը միշտ չ'ընծայիր: Միջակ գրողները միշտ աւելի բաղաւոր են, վասն զի անզարգացած ընթերցողներու ամբողջ իրենց հետ ունին:

Նոյն երևոյթը և հայ մատենագրութեան մէջ: Բացառութիւն է տեսնել հայ գրագէտ մը, օրագրութենէ դուրս, որ իր գրական աշխատութիւններովը կարենայ հանգիստ, կամ թէ անհանգիստ իսկ, ապրիլ: Արտակարգ հանգամանքներ երբեմն կը նպաստաւորեն տաղանդաւոր գրագէտ մը իր գրչովը ապրելու աշխատութեանը մէջ: Հազիւ թէ Բաֆֆի մը կարող եղաւ իր անբողջ մամակը վիպասանութիւն գրելու նուիրել. բայց զիտենք թէ յեղափոխական գրականութեան համար շատ բարեյաջող ժամանակի մը մէջ ապրեցաւ: Կայծերու հեղինակը եթէ փոխանակ 1876ին երևան եկած ըլլար 1896ին նոյն բաղաւորութիւնը պիտի չունենար: Հիմա կուան պայմանները, Թիֆլիսի գրաքննութեան արդի ուղղութիւնը, հայ ժողովրդին հոգեբանական տաղնապը Բաֆֆի մը պիտի չլսատէին մեր օրերը:

Ընդհանուր կերպով մեր բոլոր պատմաբանները, հընախօսները, բանաստեղծները, վիպասանները, վերջապէս բոլոր գրագէտները, իրենց համար ապրելու գործ մը ունենալով է որ կարող եղած են զբաղիլ նաև մատենագրութեամբ: Այսպէս՝ Քերովլէ Պատկանեան Բրոֆէսօր մը եղաւ, ինչպէս է Գրիգոր Խալաթեանց. Քամառ-Քաթիպա՝ արհեստանոցի տնօրէն, Դուրեան՝ ոսկերիչ, Պէշիկթաշլեան, Մամուրեան, Ոսկան, Թերզեան՝ ուսուցիչներ. Օտեան՝ պաշտօնեայ, Ռուսինեան՝ բժիշկ. Խրիմեան, Սրուանձտեանց՝ եկեղեցական, Պարոնեան՝ վաճառականի գրագիր: Մեր օրերը, Զօպանեան՝ ուսուցիչ, Զօհրապ՝ փաստաբան, Օտեան Երուանդ՝ Հանրային Պարտքի պաշտօնեայ և օրագրող, Բաշալեան՝ օրագրող: Կը յիշեմ՝ միայն մէկ քանին այն անուններէն որոնք զուտ օրագ-

րական յօդուածներէ դուրս արտադրած են նաև զուտ գրական գործեր:

Պէտք չէ կարծել նաև որ նոյն իսկ Մխիթարեան մատենագիր վանականները իրենց բոլոր ժամանակը կարգալու, ուսումնասիրելու, գրելու կը նուիրեն: Բնաւ Ամէն Մխիթարեան, որքան ալ արտակարգ կարողութիւններով օժտուած ըլլայ, իր ժամանակին մեծ մասը պարտաւոր է զոհել այնպիսի աշխատութեանց որոնք գրականութեան հետ ուղղակի ո՛ր և է յարաբերութիւն չունին: Ուսուցիչ են, մատակարար են, առաջնորդ են, երկրագործ են. հանգստի ժամանակին միայն կը նուիրեն գրականութեան, ճիշտ ինչպէս որ աշխարհի մէջ աշխատողները: Այսպէս ահա կը տեսնենք որ Հ. Մանուէլ Վ. Քաշունիի նման բազմազմուտ անձնաւորութիւն մը իր կեանքին առկա մեծ մասը նիւթական աշխատութեանց նուիրած է, վանքին բարգաւաճմանը համար, և մինչեւ այսօր ալ կը շարունակէ իր հողագործական տեսչութիւնը. ինչ որ սակայն արդելք չէ եղած բազմաթիւ երկերու հրատարակութեանց, որոնց մէջ Գիտութեանց Բաղդիրքը կը մնայ մեր ժամանակին քն երեւելի գործերէն մին:

Եւ Հ. Ալիշան: Հագիւ վարդապետ ձեռնագրուած, Ռափայէլեան վարժարանը պաշտօն ստանձնեց. ու անկէ ետքը մինչև 65-70 տարեկան որ եղաւ շարունակ սրտամաշ աշխատութիւններ. վարժարաններուն տնօրէն, վարդապետացուներ պատրաստող, ահա ինչ եղած է իր ծանր պարապմունքը: Ու անձամբ գիտեմ թէ Ռափայէլեան վարժարանին մէջ իր ժամանակին մեծադոյն մասը դասախօսութեամբ, մատակարարական հոգերով, հսկողութեամբ, աշակերտներուն հետ կենակցելով կ'անցընէր:

Մասնաւոր պատճառ մը չեմ տեսներ թէ ինչու այս ինչ այն ինչ գրագէտը մենաշնորհեալ բարեբաղդութեան մը իրաւունքը պէտք է վայելէ: Պէշիկթաշլեանի և Դուրեանի նիւթական տառապեալ վիճակը յաճախ մորմոքած է Հայոց սրտերը. Բագուավեպ անգամ մը եւս այդ տխուր անցեալը կը յիշեցնէ: Դուրեանի համար բան մը չենք կրնար ըսել. այնքան շուտ մեռաւ որ ժամանակ իսկ չունեցաւ իրեն նիւթական կեանք մը պատրաստելու: Պէշիկթաշլեան կարող էր շատ հանգիստ ապրիլ. իր ժամանակակից բոլոր ուսուցիչները, մասնաւորապէս Մխիթարեանց աշակերտները, լաւ վարձատրուած պաշտօններ ունէին. Յակօբ Ոսկան, Թովմաս Թերզեան, Սրապիոն. Թղեան, Եսայի Եսայեան ամէնքն ալ իբր ուսուցիչ բարեկեցիկ կ'ապրէին: Պէշիկթաշլեանի նման տաղանդաւոր լեզուադէտ մը դատաւարտուած չէր նիւթապէտ տառապելու. բայց Պէշիկթաշլեան լաւ ուսուցիչ մը չէր, ինչպէս կը վկայեն իր աշակերտներէն շատերը. դպրոցի հողաբարձուններուն պարտականութիւնը բանաստեղծները քաջալերել չէ, այլ կարող եւ ընդունակ ուսուցիչներ ընտրել:

Եւ սակայն Պէշիկթաշլեան և Դուրեան որոնք նիւթապէս թշուառ եղան, ինչպէս ետքէն ալ Պարոնեան, անոնք են որ կը մնան, կը սիրուին, կը յարգուին, եւ մինչև հիմակ կ'ապրին ազգին սրտին մէջ: Նիւթական հանգստաւէտ կենցաղավարութեամբ ապրողներէն որոնք կը յիշուին:

Յետոյ, մարդկութիւնը գրականութիւն մը ունենալէն ի վեր բանաստեղծները քաղցրեմտի մը ամէն զիրութիւնները վայելելով չէ որ ապրեր ու անմահ մնացեր են: Հոմերոս գորգերու վրայ չէր հանգչեր, եւ լսած ենք թէ պարզ մուրացիկ մըն էր: Միլտոն Կոքուստ Դրախտիին ձեռագիրը տաս ոսկիի վաճառեց. Լամարթին ձեռագիրը կը հասցնէր գրաշարներուն որպէս զի հացի մը ստակ ձարէ. եւ ազգային ողորմութեան կարօտացաւ: Իտալացի այսօրուան հարուստ գրագէտները չեմ կարծեր որ այնքան մեծ գործ մը ստեղծեն ինչպէս Երուսաղէմ Ա. զատեալը, և սակայն Թասօ կանթեղի մը կարօտը կը քաշէր:

Իմ համոզումս այն է թէ մեր գրականութիւնը ոչ թէ նիւթական քաջալերութեան կարօտ է իր զարգացմանը համար, այլ թիւրքիոյ վարչական գրութեան փոփոխումին: Այն սերունդը որ 1870էն ետքը սկսաւ գրել, յանկարծ ինքզինքը պրկուած, շղթայուած գտաւ:

Մեր վերջին տասնը հինգ տարիներու պաշտական մասովը պրպտողները հոն պիտի գտնեն ցանուած սերմեր որոնք տոհմային նոր գրականութիւն մը պիտի ստեղծէին, բայց հողիմ տակ խղղուած կը մնան, վասն զի ջուրն ու արեւը կը պակտի:

Ա. Ա.

ԹԻՒՐՔԸ ԵՒ ՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Անգլիացի հեղինակ մը, որ «Ոգիսես» անուն տակ կը ծածկէ ինքզինքը, այս օրերս հատոր մը հրատարակեց Լոնտոն Եւրոպական Թիւրքիոյ մասին: Նշանակելի գործ մըն է ասիկա, շատ իրազէկ եւ հեղինակաւոր անձի մը կողմէն գրուած, որ անկողմնակալ Վերսուլ կը դատէ Թիւրքիոյ անցեալն ու ապագան Եւրոպայի մէջ:

«Ոգիսես» կը շնայ հերքել նախ այն ընդհանուր կարծիքը թէ Թիւրք արշաւանքը պարզապէս բարբարոսութեան աւերիչ խուժումն էր ոչաւ եւ յոյն ժողովուրդներուն վրայ որոնք Պալքանեան թերափղզիին կը բնակէին Դանուբէն մէնչեւ երկու ծովերը, և քննելու մերթ կը հպանակէին Կ. Պոլիս գահակալող բիւզանդական կայսեր, ու մերթ պատերազմի մէջ էին անոր հետ: Արշաւող Թիւրքը

խաղաղ ու բարեկարգ քաղաքակրթութիւն մը չէր որ քանդեց: «Կ. Պոլսոյ առումէն առաջ դարերով հարաւային-Արեւելեան Եւրոպայի պատմութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ երկար ժամանակադրութիւն մը արեան և խոռվութեան: Ոճիրները որ յոճախ Ֆրանսացիներուն կը մեղադրուին, ինչպէս մատնութեամբ խաբէութիւն, եղբայրասպանութիւն և հաւաքական շարութիւնը, յատկանշիչներն են ոչ թէ թիրաքներուն, այլ երկրին ուր արշաւեցին:»

«Ինչպէս թողախտաւոր հիւանդ մը, որ, սովորական պայմաններու մէջ, պիտի մեռնէր, կրնայ թոքի կտորով մը տարիներ ապրիլ լեբան մը կատարի հիւանդանոցին մէջ, այնպէս ալ Կ. Պոլսը կը պահպանէ պետութիւնները որոնք գործարանական ամէն ոյժ կորսնցուցած են, և որոնց տկարութիւնները ամէնէն աւելի ակնբեր են, որովհետեւ անուանապէս պատասխանատու են ընդարձակ ու անկարգ երկիրներու համար որոնց վրայ իրական շատ քիչ իշխանութիւն ունին:» Եթէ թիրք արշաւողները նուազ քաղաքակրթ լին քան Բիւզանդացի յոյները, Պուլկարները և Սերպերը զորոնք նուաճեցին. ասոր փոխարէն անոնցմէ անհամեմատաբար գերազանց էին կորովով եւ միաբանութեամբ: Բիւզանդական «հիւանդ մարդուն» հոգեվարքը երկար քիչ: Այսպէս ալ կ'ըլլայ կոր իր յաջորդին, թիրք «հիւանդ մարդուն»—թէպէտ կէտ թոքը անդամ մնացած չէ: Բայց անսխալիչ նշաններ կան թէ իր վերջին շունչը շատ հեռու չէ:

Վախճանը պիտի գայ երբոր Մակեդոնիան ալ, Պալքանեան միւս երկիրներուն պէս, բրդուի կտրի: Ամէնէն առաջ բրդուը Յունաստանը եղաւ: Յետոյ Ռումանիա, որ յաճախ, թէպէտ սխալմամբ, Պալքանեան երկիրներուն կարգը կը յիշուի: Սերպերը անոնց հետեւեցան: Յետոյ եկան Պոսնիացիները, եւ Պուլկարները: Կը մնան Մակեդոնացիները: Իրենց «բրդիլը» զժուարացնող պարագան՝ իրենց ցեղային զանազանութիւններն են, Պալքանեան թերակղզիին բոլոր ցեղերն ու ազգայնութիւնները իրար խանուած են Մակեդոնիոյ մէջ: Պալքաններուն վրայ թիրք գերիշխանութեան պայմաններէն մին՝ ցեղային զանազանութեանց և հակառակութեանց այս գոյութիւնն էր: Բայց աւելի հիմնական պատճառ մը՝ թիրքերին «անփոփոխ նկարագիրն» է: Սկիզբէն մինչև վերջը, թիրքերը լոկ գրաւող բանակ մը եղած են: Հարկահաւաքներ եղած են, խաղաղութիւնը պահպանելով (ընդհանրապէս բաժանեալ գի տիրեցես զրութեամբ) իրենց հարկերուն շահուն համար. բնաւ բան մը հասկցած չեն ելումուտքէ, ճարտարագործութենէ, ո և է տե՛սակ յառաջդիմութենէ: Վարչական տաղանդի ո՛ր եւ է նշան ցոյց տուած չեն: Իրենց կառավարական գրութիւնը ամբողջովին «եկամուտ տարրերէ» կախում ունեցած է, այսինքն թէ, թիրքերոյ կառավարութիւնը ոչ-թիրք բաղտախընդիրներու ձեռքը եղած է միշտ: «Ողիսես» կը նկատէ

թէ այդ եկամուտ տարրերը այլ եւս սպառած են: Ամէն պարագայի մէջ, թիրք կառավարութիւնը արտաքին տարրերէն կը վախնայ այսօր: Հետևաբար, կը փորձէ առանց անոնց իր գործը տեսնել:

«Տասնեկիններորդ դարու ազգային շարժումներու հետեւանքով, Դուռը ա՛լ իր վտառհուծութիւնը վերցուցած է քրիստոնեաներէն: Եւրոպայի մէջ ոչ մէկ քրիստոնեայի թոյլ կը տրուի զէնք կրել, բացի Աւլանիացիներէն: Վարչութեան մէջ շատ քիչ քրիստոնեայ պաշտօնեայ կայ: Այժմ հաւանօրէն շատ աւելի թիրք պաշտօնեայ կայ քան օսմանեան տիրապետութեան ո և է նախորդ շրջանի մը, եւ շահեկան պիտի ըլլայ տեսնել թէ թիրքերը կարող պիտի ըլլան իրենց ցեղէն հայթայթել պէտք եղած թուով պաշտօնեաներ, որոնք առաջ չկային: Ազգային շարժումներուն շատութիւնը թէպէտ միշտ անձկութիւն կը պատճառէ, ոյժի աղբիւր մըն է կեդրոնական կառավարութեան համար: Յոյները, Սերպերը, Պուլկարները, առանց հաշուելու Վալաքներն ու Ալպանիացիները, իւրաքանչիւրը իրենց յատուկ ձգտումները ունին, եւ գաւնոնք մին միւսին գէժ հանելով ու պարագային համեմատ տկարագոյն կուսակցութեան ուժ տալով, կեդրոնական իշխանութիւնը իր ոյժը կը պահէ:

Բայց եթէ, ինչպէս հեղինակը կ'ըսէ, թիրքը ի բնէ անկարող է քաղաքային ո և է գործի՝ թէ՛ կառավարութեան, թէ՛ առեւտուրի և թէ՛ ճարտարագործութեան մէջ, եւ եթէ կայսրութեան մէջ թիրքերն եւ ոչ-թիրքերն միջև հաւասարութիւնը կարելի չէ, կը հետեի որ թիրք ուժերով երկիրը վարելու գրութիւնը հարկաւորաբար անյաշող պիտի ելլէ: Թիրքը, կ'ըսէ անգլիացի գրողը, կը վախնայ քրիստոնեայէն: Գիտէ թէ մէջտեղէն պիտի ալուի սրբուի եթէ բարենորոգիչները կամ քրիստոնեայ պետութիւնները հաւասարութիւն հաստատեն երբեք քրիստոնէին և թիրքին միջև: Հարստահարութեանց վերանորոգուող երևոյթին պատճառը աս է, եւ ո՛չ թէ զուտ բարբարոսութիւնը եւ անգթութիւնը: Կրօնքը գործ չունի ասոր մէջ. թիրքը մինչև այսօր կրօնքի տարբերութիւններու մասին ներողամիտ եղած է: Հարստահարութեանց եւ ջարդերուն պաշտնիքը այն վախն է գոր թիրքը ունի յառաջդիմասէր քաղաքային տարրէն, քանի որ կը զգայ թէ ինք բան մը ընելու անկարող է եւ ուրիշ բան չէ բայց եթէ հարկահաւաք զինուոր մը:

«Թիրքը միշտ պատրաստ է հաւտալու թէ Հայերը եւ Պուլկարները զէնք կը ներածեն կամ կը դաւադրեն կոր Կ. Պոլսը այրելու համար, և անկեղծ խուճապով կ'ըսէ թէ ոչ մէկ մահմետականի կեանքը ապահով է: Եւստ ազատական թիրքերու հանդիպած եմ որոնք ազատութիւնը և հաւասարութիւնը բերնէ չէին ձգեր, բայց անոնց մէջ մէկը չգտայ որ չհաւանէր 1895-96ի հայկական ջարդերուն և չփորձէր արդարացնել զանոնք: Ասոր փոխարէն ալ թիրքերոյ քրիստոնեաները ազատա-

կան կամ « երիտասարդ » թիւրքերուն համար աւելի հա-
մակրանք մը չեն տածեր քան հին եւ մայրաքաղաք թիւր-
քերուն համար: Երիտասարդ թէ ծեր, արմատական թէ
պահպանողական, իրենց արտունջները կամ յոյները լոկ
իրենց ցեղին եւ կրօնքին մէջ կը սահմանափակուին, ու
հաշուի չեն առնել իրենց տիրած երկիրներուն ժողովրդին
մեծամասնութիւնը:»

Թիւրքերուն պատմութիւնը ի բաց առեալ իրենց հը-
պատակներունը, անուններու և պատերազմներու ցանկ
մըն է: Թիւրքը, կ'ըսէ անգլիացի հեղինակը, սա գերա-
զանց յատկութիւնները ունի—քաջութիւն, հնազանգու-
թիւն, կարգապահութիւն, ժուժկալութիւն և ուղղութիւն: Եւ
սակայն ուրիշ բան չէ բայց եթէ զինուոր մը. ու ան-
կից աւելի արի, աւելի համբերատար, աւելի անձնագոհ
կռուող չի կայ աշխարհի մէջ: Թիւրքերը մինչեւ այսօր
պարզապէս զրաման բանակ մըն են նոյն իսկ է. Պոլիս:
Թիւրքին ժառանգական թափառոյած զգացումն ու բնազդը
երեւան կուզայ ամէն բանի մէջ:

« Թէ՛ քաղաքներու և թէ՛ գիւղերու մէջ, իրենց բնա-
կարանը կը փոխեն արտակարգ դիւրութեամբ, և զար-
մանալի կը գտնեն երկար ատեն միևնոյն տեղը բնակիլ:
Թիւրք տան մը տեսքը ինքնին ցոյց կուտայ թէ՛ մեա-
յուն բնակութեան մը սահմանուած չէ: Գետնայարկը ընդ-
հանրապէս յատկացուած է ակոսներուն և շտեմարանին,
ուրկից սանդուղ մը կը տանի վերի յարկը, որ սովորա-
բար երկար անցք մըն է որուն վրայ մէկ քանի սենեակ-
ներ կը բացուին՝ դռներու փոխան վարագոյրներով: Սեն-
եակները ընդհանրապէս մաքուր են, բայց մերկ ու ան-
կահ: Պատերը պարզապէս ծեփուած են, եւ մէկ կամ
երկու եւաֆրեով միայն զարդարուած: Աթոռ ու սեղան
չի կայ, ու պատին մէջ շինուած պահարանները անտաշ
փայտէ են: Եւրոպացիին կրած ընդհանուր տպաւորու-
թիւնը սա է թէ խուճ մը ճամբորդներ հին յարգանոց
մը գաեր ու ըսեր են, « Սա տեղը քիչ մը կարգի գնեց-
հոս մեանք. շատ հոգ տանելու պէտք չի կայ. հաւանօրէն
չաբաթէ մը նորէն ճամբայ պիտի ելլենք:»

Թիւրք տան մէջ սենեակները ո և է մասնաւոր սահ-
մանով մը չունին: Նոյն դիտողութիւնը կը յարմարի նոյն
իսկ կառավարական պաշտօնատներուն: Դիւանատունը,
բնակարանին պէս, վաչկատունի մը վրանին տպաւորու-
թիւնը կը թողու վրայ:

« Այս կարգի մանրամասնութեանց մէջ չէ՛ միայն որ
այս յատկանիշը երևան կուզայ, այլ պետութեան ամ-
բողջ կազմակերպութեանը մէջ: Թիւրքերը անշուշտ կը
զգացուին իրենց կայսրութեան բաժանումէն, բայց ո՛չ
այն կերպով որով Ֆրանսացիները կը զգան Ալգաս-
Ղորէնի համար: Իրենք « Թիւրքիա » բառը չեն դորձածեր
սովորական խօսակցութեան մէջ: Բնաւ չեն ըսեր թէ
Սերպիա կամ Յունաստան թիւրքիոյ մասերն են որոնք
անշատուած են, այլ լոկ հարկատուներ որոնք անկախ

եղած են, նահանգներ զոր ատեն մը թիւրքերը կը զը-
րաւէին և ուր այսօր թիւրք չի կայ: Նահանգ մը ուրիշ
կառավարութեան մը տակ անցնելուն պէս, թիւրքը կը
զատէ թէ աշխարհիս ամէնէն բնական բանն է զայն թու-
ղուլ եւ ուրիշ տեղ մը երթալ: Նոյն ոգիով, ամենայն
համակերպութեամբ կը խօսի օր մը է. Պոլիսը թողելուն
պատահականութեանը վրայ: Ասիա կ'երթայ եւ ուրիշ
մայրաքաղաք մը կը գտնէ: Մարդուն միտքը չի կրնար
մտնել որ Անգլիացի մը այսպէս խօսի Լոնտոնի մասին,
բայց կարելի է որ այսպէս խօսի կալիֆոռնիայի մասին:»

Թափառական մը ըլլալով, թիւրքը, կը շարունակէ
հեղինակը, կարելի եղածին չափ քիչ պաշար ունի հետը,
մտաւորական թէ նիւթական պաշար: Բնաւ մը աւելցու-
ցած չէ աշխարհի զրականութեան, արուեստին, իմաս-
տասիրութեան, գիտութեան կամ քաղաքական անտե-
սութեան վրայ, ու բնաւ անցնելիք չունի: Իր տա-
րազը, ճարտարապետութիւնը, լեզուն, կրօնը ուրիշնե-
րէն փոխ առած է, նոյն իսկ իր մարտիկները, ինչպէս
Եֆէնիչերիները, որոնք քրիստոնեաներէն իրր տարեկան
տուրք առնուած և իսլամացուած տղաքներէն կազմուած
էին: Այլ տղաքները կը մարզուէին բոլորովին անվախ
ըլլալու, և հաւատարիմ իրենց միակ տէր եւ հայր սուլ-
թանին: Հաւատարմութիւնը՝ կրօնական կիրք մըն էր
իրենց համար: Իր լաւագոյն օրերուն՝ Եֆէնիչերիները
զասակարգը ամէնէն զարհուրելի զէնքն էր որ երբեք
բռնաւորի մը ձեռքը գտնուած ըլլայ: Անոր անկումովը,
կայսրութեան անկումն ալ սկսաւ:

Հեղինակը կը խօսի Մահմետականութեան և խալի-
ֆայութեան վրայ, եւ կը գտնէ թէ, իբր կրօնական և քա-
ղաքական միացեալ պետ, Ապտիւլ Համիտ աշխարհիս
ամէնէն բացարձակ միապետն է:

ՄԻՋՈՋԳՈՅԻՆ ԲՈՂՈՒԲՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբեր 20ին Գերմանիոյ նախարարապետը Խոր-
հրդարանին առջեւ մեծ ճառով մը բացատրեց կայսրու-
թեան քաղաքականութիւնը չինական խնդրին մէջ: Պի-
լովի բացատրութիւնները ապահովեցին Եւրոպան թէ մեր-
ձաւոր կամ հեռաւոր ապագայի մը մէջ խաղաղութեան
վրդովումին ո՛ր և է վտանգ չի կայ Եւրոպոյն—Արեւել-
քէն: Գերմանիա փափաքող չէ չինական տաղնապէս ան-
միջական օգուտներ ձեռք բերելու, բաւական կը հա-
մարի գրաւած զիրքերը պահպանել: Եւ որ աւելին է.
պետութիւններն ալ համոզուած ըլլալ կը թուին թէ Եւրո-
պոյն—Արեւելքի մէջ իրենց փոխնդարձ ազդեցութիւնը

ները ամրապէս հաստատելու համար Չինաստանի բա-
ժանումին անհրաժեշտ հարկը պիտի չզգացուի: Պետու-
թիւնները կ'ըմբռնեն որ չինական կայսրութիւնը եթէ
մէջերնին բաժնեն պիտի չկրնան իրենց ճարտարագոր-
ծութեան եւ վաճառականութեան շահերը իրենց ուզածին
պէս նպաստաւորել: Իւրաքանչիւր պետութիւն իր զը-
րաւած մասին տէրը ըլլալով պիտի չթողատրէ ուրիշ ազ-
գերու ազատ վաճառականութիւնը իր չինական հողին
վրայ: Եւ այնպէս որ եթէ վեց պետութիւն Չինաստանը
մէջերնին բաժնեն, իւրաքանչիւրը այդ աշխարհին մէկ
վեցերորդին մէջ միայն պիտի կարենայ ազատօրէն թա-
փել իր մայր երկրին ապրանքները, իսկ մնացած հինգ
մասին մէջ պիտի ենթարկուի բոլոր այն սեղմումներուն
որոնք Եւրոպայի մէջ կը կաշ'անդեն ճարտարագործու-
թիւնը եւ վաճառականութիւնը: Իսկ երբ ամբողջ Չի-
նաստանը ամէնուն առջեւ բաց ըլլայ ան ատեն անհուն
ասպարէզ կայ ազատ մրցումի: «Ո՛ր եւ էշահ շունինք»
ըսաւ Պ. տը Պիլով, մեր ազգեցութիւնը սահմանափա-
կել որոշեալ շրջանակի մը մէջ: Մեր ուզածն է գուր չի
փակել բարեկամական մրցումի մը միւս պետութեանց
հետ:»

Գերման նախարարապետին յայտարարութիւնը իր
մէջ կը պարունակէ էն յստակ մեկնութիւնը անկո-զեր-
ման համաձայնութեան որ հոկտեմբեր 16ին Լոստոն ըս-
տարագրուեցաւ: Եւրոպական մամուլը կ'ընդունի որ եթէ
բոլոր պետութիւններն ալ միևնոյն իմաստով մեկնեն այդ
պայմանագրութիւնը, ու Անգլիոյ եւ Գերմանիոյ հաշտա-
բար ոպիէն ներշնչուին իրենք ալ, այն ատեն շուտով
կը վերջանայ ազգեցութեանց շրջանակներու ընդարձակ-
ման մրցումը, եւ ամբողջ Չինաստանը կը բացուի Եւրո-
պայի ճարտարագործութեանը եւ վաճառականութեանը
առջեւ:

Սակայն այս քաղաքականութիւնը Ռուսիոյ հաշուին
չի գար: Չարին կայսրութիւնը թէեւ զինուորական եւ
քաղաքական շատ մեծ ուժ մը կը ներկայացնէ, բայց իր
ճարտարագործական և աւետարական կարողութիւնը տը-
կար է, եւ միւս պետութեանց հետ չի կրնար մրցիլ:
Ռուսիոյ փափագն է Չինաստանի ինչ ինչ մասերը բա-
ցարձակապէս իր տրամագրութեանը ներքեւ ունենալ, իբր
զուտ ոռոսական հող, որպէս զի կարենայ առանց մըր-
ցումի ներածել իր ճարտարագործութեան արդիւնքնե-
րը: Բայց վերջապէս Եւրոպա չի կրնար մինակ Ռու-
սիոյ համար իր շահերը ոտնակոխ ընել: Չինական ու-
րիշ նահանգներուն պէս Մանչուրիան ալ պէտք է բաց
մնայ ընդհանուր եւրոպական մրցումին առջեւ, եւ Ռու-
սիա քիչ մը աւելի ջանք ընելու է, իր աշխատութիւնը
կրկնապատկելու է:

«Կուզենք ապրիլ, եւ թողույ որ ուրիշներն ալ ապ-
րին», ահա այս է Գերմանիոյ արգի Արեւելեան քաղա-
քականութեան նշանաբանը, որուն կ'երեւի թէ հաւատա-

րիմ պիտի մնայ երկրագունդին ուրիշ կողմերն ալ: Այս
քաղաքականութեամբն է ահա որ Գերմանիա կը հզօ-
րանայ ու. մեր Արեւելքի մէջ թիւրքիան ալ Չինաստանի
վիճակին վերածելու կը նկրտին Գերմանիա եւ Անգլիա:
Այս լայնածաւալ ու բնական հարստութիւններով մեծածոխ
կայսրութիւնն ալ կուզեն բաց պահել ընդհանուր Եւրո-
պայի ճարտարագործութեանը եւ վաճառականութեանը
առջեւ: Թիւրքիոյ մէջ ալ Ռուսիա իր գէմը կը տեսնէ այն
միեւնոյն քաղաքականութիւնը որ Չինաստանի մէջ իր
ծրագիրներուն խոչնդոտ կը յարուցանէ. Բայց թիւրքիոյ
մէջ Գերմանիա առանց մեծ ցնցումի, առանց պետու-
թեանց միջամտութեանը կը յառաջացնէ իր քաղաքակա-
նութիւնը:

Եւրոպայի զիւանագիտութիւնը կը կարծէ թէ Անգլիա
եւ Գերմանիա ինչպէս որ համաձայնած են Չինաստանի
համար, նմանապէս միաբան են եւ մեր Արեւելքի մասին:
Սակայն զեռ որոշապէս չգիտցուիր թէ Հայաստանը
Ռուսիոյ ձգելու որոշում տուած են թէ ոչ. բայց ընդ-
հանրապէս հաւանական կ'երեւի որ ո՛չ Անգլիա ո՛չ Գեր-
մանիա տրամադիր են Պաղտատի ճամբան Ռուսիոյ
յանձնել: Մեզի նպաստաւոր այս հաւանականութիւնը
կրնանք ստուգութեան մօտեցած համարիլ երբ ուշադ-
րութիւն ընծայենք այն մերձեցման սրով Անգլիոյ ոչ
միայն կառավարութիւնը ուլ ամբողջ ժողովուրդը, իր
մամուլն ալ մէկտեղ հետզհետէ նորէն թիւրքիոյ կը փարի:
Գերմանիա եւ Անգլիա հիմակ թիւրքիոյ մեծագոյն բա-
րեկամները կը համարուին. եւ այդ բարեկամութիւնը
ապահովիչ զբաւական մըն է Հայաստանի ապագային
համար:



Ինչ պիտի ընէ Ռուսիա: Ըստ անկո-զերման
պայմանագրին ո՛ր եւ է պետութիւն որ ուզէ Չինաստանի
այսինչ այն ինչ մասը միս մինակ ինք զբաւել պատճառ
պիտի ըլլայ որ միւս պետութիւններն ալ իր օրինակին
հետևողներ ըլլան. եւ որովհետեւ ո՛չ մէկ պետութեան
շահը կը ներէ Չինաստանի բաժանում մը թողատրել,
հետևաբար Ռուսիա երբ Մանչուրիան զբաւելու փորձ մը
ընէ, իր գէմը կանգնած պիտի տեսնէ միւս պետութեանց
շահերը: Պիտի համարձակի՞ միս մինակ զիմագրաւել
Եւրոպայի: Ո՛չ. Ռուսիա այդպիսի մեծ վտանգի մը
չենթարկել ինքզինքը, և մեծ կայսրութեան Եւրոպայի
առջեւ այս տկարացումը կ'երաշխաւորէ խաղաղութեան
պահպանումը:

Եւրոպայի ինչ ինչ պետութիւններն ալ կը կարծեն թէ Ռուսիա
չի կրնար միս մինակ ինք զբաւել պատճառ պիտի ըլլայ որ
միւս պետութիւններն ալ իր օրինակին հետևողներ ըլլան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսէն Րիւթերի գործակալութիւնը կը շարունակէ Հայաստանի կացութեան մասին անզլիական մամուլին պարբերաբար ստոյգ տեղեկութիւններ հաղորդել:

«Էրզրումէն, Վանէն, Խարբերղէն, Պիթլիսէն, Տիարպէքերէն հասած բոլոր տեղեկութիւնները, կը զրէ Րիւթեր, կը պատմեն թրքական բռնաբարութիւնները և հարստահարութիւնները ընդդէմ հայոց. ոճրագործները շատ անգամ Համիտիէ Գիւրտերը ըլլալով, Բաղդատ, մամբ անցեալ տարուան, վերոյիշեալ նահանգներուն վիճակը շատ աւելի վատթարացած է. ակնբեր է որ տեղական իշխանութիւնները անկարող են, կամ թէ չկամեցող, միջամտելու եւ Գիւրտերը զսպելու:

Արաբկիւրի Էհնեցիկ գեղի դէպքը կրնայ գաղափար մը տալ Գիւրտերու գործած բռնաբարութեանց վրայ: Այս սեպտեմբերին Խարաբունար գեղէն բազմաթիւ Գիւրտեր յարձակեցան Էհնեցիկի վրայ. գեղին թիրք բնակիչներուն ազդարարեցին թէ իրենց վախնալու բան մը չունին, իրենց ո՛ր և է չարիք պիտի չհասցնեն: Այս ապահովութիւնը իսլամներուն տալէ յետոյ, Գիւրտերը սկսան շրջակայ բլուրներէ կրակ ընել Հայոց տուններուն վրայ: Գիւրտանները անկարող էին ո՛ր և է ընդդիմադրութեան. Գիւրտերը վար իջան բլուրներէն եւ սկսան թալլել Հայոց տունները: Տեղին երեւելի հայերէն մէկը ծանրապէս վիրաւորուեցաւ. Գիւրտերը զանիկայ քաշեցին գեղէն դուրս տարին որպէս զի սպաննեն, բայց այդ խեղճին աղջիկը իր բոլոր փոխարեւոյնները եւ արժէքաւոր իրեղէնները փշրկանք առլով հայրը՝ ազատեց: Երկու հայ դարբին որ փորձեցին Գիւրտերուն դիմադրել, գնտակահար եղան. անոնցմէ մին մեռաւ, միւսն ալ ծանրապէս վիրաւորուեցաւ:

Տեղական իշխանութիւնը քննութիւն մը բացաւ, բայց առանց արդիւնքի մը. Գիւրտերուն դէմ ո՛ր և է անօրինութիւն չեղաւ:

Խարբերղի և Տիւրսիմի նահանգներուն «բարեկարգութեանց քննիչ» կարգուեցաւ Ալի փաշան: Մոռցուած չէ որ այս անձը Բաղէշի զինուորական հրամանատարն էր. ինքն էր որ Սպաղանք երթալով այս յուլիսին կոտորեց հայերը. իր չափազանց վայրագութեանը համար պաշտօնանկ ըլլալով Երզնկեան փոխարեւոյնացաւ:

Այս առթիւ Րիւթեր կը հաստատէ թէ Սպաղանք կոտորուող Հայոց թիւը 220 է, ինչպէս կը հաւաստեն Էրզրումէն հասած տեղեկութիւնները, սրոնք կը հաստատուին ուրիշ տեղուանքէ ալ ստացուած թիւերով:

Սպաղանքի կոտորածը քննելու յանձնախումբ մը զրկուած էր Սասուն, նախագահութեամբ Էնվեր փաշա-

լի: Երաթներէ ի վեր այդ քննիչ մարմինը Պոլիս վերադարձած է, բայց դեռ ոչինչ լուծած է քննութեանց արդիւնքին վրայ:



Նոյն գործակալութիւնը Հայաստանէն ստացած տեղեկութեանցը վրայ հիմնուելով Բաղէշի եւ Մուշի Հայոց վիճակին սրտածմլիկ նկարագրութիւնը կ'ընէ: «Գիւրտանեայ տարաբաղ ժողովուրդը, կ'ըսէ, ամէն տեսակ հալածանքի ու ճնշումի ենթարկուած է: տեղական իշխանութեանց և անոնց օգնող Գիւրտ պեյերու հարստահարութիւնները շատ վտանգաւոր կացութեան մատնած են հայերը: Հայ գեղացիներու գանգաւանները բազմատեսակ են եւ յոյնաթիւ:» Րիւթերի գործակալութիւնը այդ գանգաւաններէն մէկ քանին մէջ կը բերէ:

Այսպէս ահա, հայ երկրագործները որոնք երկրագործական գրամատուններու հիմնարկութեանը հզօրապէս նպաստած են, ամենամեծ գժուարութեանց կը հանդիպին շնչին փոխառութիւն մը իսկ ընելու համար: Կը պարտաւորուին իրենց արտերը, կարասիքը, պաշարը գրամատան գրասի դնել հինգ անգամ նուազ արժեքով (օրինակի համար, մէկ մէծիտիէ փոխ աննելու համար մէկ ոսկիի արժուութեամբ գրաւ տալու են). ու երբ որոշեալ օրը պարտքերնին չհատուցանեն, գրաւը, սր պատրեքին հնգապատիկն է, կը վաճառուի, եւ հաշիւը կը փակուի:

Ամէն էրիկ մարդ հայ իր գաւառին ճամբաներուն շինութեանը եւ վերանորոգումին համար կամ պէտք է ձրիաբար որոշեալ ժամանակ մը աշխատի, եւ կամ պէտք է տասերկու դուրուզ գծարէ. բայց իշխանութիւնը թէ՛ աս տասերկու դուրուզի տուգանքը կը գանձէ և թէ մարդիկը նորէն ձրիաբար կ'աշխատցնէ:

Մուշի կ'առաջարկութիւնը վերջին ամիսներս օտիպեց հայ բանուորները ձրիաբար աշխատիլ կ'առաջարկական քանի մը մեծ շէնքերու կ'առուցմանը զանազան գեղերու մէջ. բայց բաւական չըլլար իրենց ձրի աշխատութիւնը, այլ և շէնքերուն առաջմն ալ, փայտերն ալ իրենց ձրիաբար հայթայթելու պարտական են. նմանապէս մզկիթի եւ մինարէի շինութեանց համար ալ նոյն տարապարհակ աշխատութիւնը, նիւթեղէններու նոյն ձրի հայթայթումը կը պահանջուի Հայոցմէ:

Վերջերս քիւրտեր, թիւրքեր Մուշի եւ անոր մերձակայ գաւառներու հայոց տեղերը հաստատուեցան, գրաւելով անոնց հողերը: Իբր ճորտ կը գործածեն բուն հողատերները, պարտաւորելով զանոնք ամէն աշխատանք ընել յափշտակուած հողերուն վրայ, պարզապէս անօթութենէ չմեղնելու չափ բան մը տալով անոնց իբր ուտեստ:

Հեծելագործներու շրջկատներ գաւառակներու ամէն

կողմերը հարկ հաւաքելու կը շըջին. գեղացիները ոչ միայն ատոնց ուտեստը, անոնց ձիւնը բուտը հոգալու են, այլ եւ միշտ կազմ եւ պատրաստ պէտք է գտնուին որ պահանջուած ատեն ոչխար եւ ուրիշ պաշարներ տան հարկահաւաքներուն:

Այս բոլոր հարստահարութեանց հետեանքն է որ հայերը կը մահմետականանան ազատուելու համար այս բռնութիւններէն: Մասնաւորապէս հայ աղջիկները մահմետականացնելով հարէմները կը տանին:

Կ. Պոլսէն Տէյի թեղիկրաֆին կը հեռագրուի որ քիւրտերը Բաղէշի մօտ հայ գեղի մը վրայ, յարձակելով թալիւր են, վանքը այրեր են, վանահայրը ըսպաններ են:

Տիարպէքիբէն ալ շատ ծանր լուրեր կը հասնին: Մեր ընթերցողները քաջ տեղեակ են կուտակալ Խալլըթ պէյի ընդդէմ Հայոց ի գործ դրած կառավարչական բարբարոս դրութեան: Հիմակ ալ Հայերը բանտերուն մէջ կը տանջէ, ամբաստանելով գանոնք որ իբր թէ Ամերիկայէն գացող հայեր Տիարպէքիբ ումբեր կը պատրաստեն եղբր խռովութիւններ յարուցանելու նպատակաւ: Այս ամբաստանութիւնները Պոլիս հաղորդուած է, և հոնկէ անդլիական մամուլին կը հեռագրուի:

Ու այդ բոլոր ահեղ տեղեկութիւնները լսելով հայ ժողովուրդը կը հարցնէ թէ, արդեօք Կ. Պոլսոյ պատրիարքը գոնէ բողոքի ձայն մը բարձրացնելու պարտականութիւնն ալ չը զգար:

ԱՐՁՈՒԵԱՆ ԵՒ ԳՈՉԵԱՆ

Նոյեմբեր 19 թուականով Կ. Պոլսէն անգլիական թերթերուն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պ. Ալիքսան Արզուեան որ սեպտեմբեր 6ին Կ. Պոլիս Սարըհար ձերբակալուած էր, նոյեմբեր 18 կիրակի օր ազատուեր է:

Փրանսայի արտաքին գործոց նախարար Պ. Տէլքասէ մեծ հոգածութիւն ցոյց տուած է ժողովրդական հայ երիտասարդին համար, որ Փրանսայի գրական եւ քաղաքական շրջանակներու մէջ զինքը մեծապէս սիրող եւ յարգող բարեկամներ ստացած է: Պ. Տէլքասէ Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանատան շատ որոշ հրահանգներ զըրկած է ինպատ Պ. Արզուեանի:

Նմանապէս Լոնտոնէն քաղաքական անձնաւորութիւններ, որոնց շատ ծանօթ են Պ. Արզուեան եւ իր քաղաքական բարեկամները, շերմագին յանձնարարա-

կաններ զրկեցին Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան: Օսմանեան իշխանութիւնը նկատողութեան առնելով դեսպանատուններու կողմէն Պ. Արզուեանի յայտնուած յարգանքն ու համակրանքն օգտակար համարեց առանց ծանր զժուարութիւններ յարուցանելու, Ամերիկեան դեսպանատան յանձնել բանտարկեալը:

Այս առթիւ անօգուտ պիտի չըլլար յիշեցնել որ Պ. Արզուեան երբ 1895ի վերջերը ձերբակալուեցաւ, Թանի Կ. Պոլսէն ստացած մէկ հեռագիրը մեծապէս դիրացուց անոր ազատ արձակումը: Բարիզեան մեծ թերթը կը տեղեկացնէր որ «եթէ Պ. Արզուեանի բանտարկութիւնը երկարատեւէ, Հնչակեան կուսակցութիւնը, որուն էն ազդեցիկ անդամներէն մին է յիշեալ երիտասարդը, Պոլսոյ մէջ հանդարտութիւնը վրդովելու չափ առաջ պիտի երթայ»:

Ֆիլիպէէն մեզի կը հեռագրուի թէ Պ. Արզուեան հոն հասեր է, և քիչ մը հանգստանալէ յետոյ պիտի մեկնի Եւրոպա գալու:

* * *

Պ. Զարեհ Գոչեան որ 1899ի զարնան Պոլիս մտնելով մինչեւ 1900 օգոստոս հոն միաց, այս օրերս Լոնտոն ժամանեց: Պ. Գոչեան կը փնտուէր Պոլսոյ ոստիկանութեան. իր լուսանկարը հարիւրաւոր օրինակներով տարածուած էր ամէն կողմ: Արիստիտ եւ անձուէր երիտասարդը ոստիկանական բոլոր թակարդներէն խոյս տալով երկար ատեն Պոլիս մնաց, բայց ձերբակալման ստուգութիւնը տեսնելով թողուց թիւրքիոյ մայրաքաղաքը, պատրելով ամենախիստ հսկողութիւն մը: Պոլսոյ ոստիկանութիւնը չէր կրնար հաւտալ թէ քանիցս դատապարտեալ որքա՞յն այս անգամ եւս իր ճանկէն ճողորմաբ ըլլայ, ուստի ամէն անկիւն Գոչեան կ'որոնէր, հակառակ հալածեալին Աթէնք ներկայութեանը: Կը յուսանք թէ այժմ ա՛լ կը հաւտան որ Պ. Գոչեան Պոլիս չէ:

Բազմաթիւ ձերբակալեալներ սակայն դեռ կը մնան Պոլսոյ բանտերը: Հայաստանցիներ որոնք վերջերս հայրենիք աքսորուեր էին, կրկին Պոլիս բերուելով բանտարկուեր են և սարսափելի տանջանքներու կ'ենթարկուին: Ասոնցմէ մէկը ամերիկեան հպատակ ըլլալով դեսպանատունը զայն ազատեր է. տեսնողները կը պատմեն թէ խեղճը կ'մախք մը դարձեր է կրած շարչարանքներէն: Ստոյգ աղբիւրներէ կը հաղորդուի մեզի տրուած տանջանքներու մանրամասնութիւնները:

Ոստիկանութեան նախորար Շէֆիզ պէյ որ կը յուսար Պ. Արզուեանի ձերբակալութիւնը պատուանդան մը ընել փաշայութեան բարձրանալու համար, հիմակ մոլեղնած է եւ վրէժը հայ բանտարկեալներէն կը լուծէ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ աշխի եւ աշխի կը կենտոտին, կը հեռագրուի թայվզին Կ. Պոլսէն: Պատրիարքարանին ժողովը իր նիստերը այլ եւս դադրեցուց, նկատելով որ իր խնդիրներէն ոչ մէկը ընդունելու տրուեց:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ. Պ. Մաքքիլի Միացեալ-Նահանգներու Հանրապետութեան նախագահ վերընտրուեցին ի վեր Ամերիկայի եւ Թիւրքիոյ միջև յարաբերութիւնները ձգտեալ վիճակի մէջ են: Ամերիկեան կառավարութիւնը կոզգէ Խարբերոյ հիշատակու մը նշանակել, իսկ Ինուար կ'ընդդիմանայ, ասարկելով որ այդ նահանգին մէջ Ամերիկացիները անւտրակիւս ո՛ր է գործ չունին: Խնդիրը այժմ բանակցութեանց ասարկայ եղած է: Նմանապէս միսոնարներուն հատուցուելիք տուագների խնդիրն ալ նորանոր մտահոգութիւններ կը պատճառէ Իրան:

Ամերիկեան ֆէներուսքի գրահաւորը Իզմիրի առէն հասած է: Նախապէս Եւրոպայ տարածուած շուրերուն համեմատ, այդ ժամանակուր ցոյցի մը նկատակաւ պիտի ըլլար, բայց Վաշինկթոնէն նոյեմբեր 28 րոնակաւնով կը հեռագրուի թէ գրահաւորին Իզմիր այցելութիւնը ո՛ր է քննական դիտումով չէ: Պոլիս Ամերիկեան դեսպանատան եւ Իրան միջեւ բանակցութիւնները կը շարունակուին կարգադրելու համար թէ միսոնարներուն հատուցուելիք տուագներին եւ թէ Խարբերոյ հաստատուելիք հիշատակարանին խնդիրները:

Վաշինկթոնի օսմանեան դեսպանը, Ալի Ծերուս պէյ, նոյեմբեր 28ին այցելութիւն տուած է Միացեալ-Նահանգներու Արտաքին Գործոց նախարարին, եւ խօսած է Ամերիկեան գրահաւորին Թիւրքիոյ շուրերը երբայն գործին վրայ: Պատասխան ստացեր է թէ գրահաւորին այցելութիւնը սպասնական ո՛ր է և նկատակաւ չէ:

Ինսպանը միանգամայն շատ դրական կերպով հաստատած է թէ սուլթանը ամենայն զգացումներ կը տածէ Պ. Մաքքիլիի համար, եւ թէ իրենց յարաբերութիւնները շատ բարեկամական են:

Հաւանական է որ ամերիկեան գրահաւորին քրքական շուրերուն մէջ երևանային յետոյ Երջուզին տրամադրութիւնները անմիջապէս փոխուած ըլլան. ու հիմակ երէտոյները փրկելով գոհացում տրուի ամերիկեան պահանջումներուն:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ. Ռուսիա ստիպմամբ կը պահանջէ պատերազմական տուագների տարելմարը: Պոլսոյ Երևտական նախարարութիւնը 70,000 ոսկին պատրաստած է, իսկ մնացեալ 280,000 ոսկին ուլ մին:

չեւ դեկտեմբերին վերջ հատուցանել կը խոստանայ:

Միւրեւ վերջերս Կովկասեան իշխանութիւնը քիչ քիչ հիշատակարաններուն կը յանձնէր զինուորական ծառայութիւն խոյս տալով Կովկաս ասպատակող քիչ քիչը: Բեդրպուրկէն ներքին գործոց նախարարը հրահանգ դրկած է Կովկաս որ փոխտակական քիչ քիչըրը այլեւս իրենց հիշատակարաններուն լցանձնուին:

ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒՆ մէջ Գերմանիա քրքական ֆուլմա կողին իարացնել ուզեց, ածուխի մթերանոց մը հաստատելու համար: Այս գրատուրը շատ դժգոհութիւն պատճառեց Երջուզին: Այժմ սակայն Գերմանիա և Թիւրքիա համաձայնութեան մը եկած են, պայմանաւ որ Թիւրքիան մթերանոցները շինէ, իսկ Գերմանիան ալ ածուխը տայ:

ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵՑՈՑ շարքարերը որ Ամերիկայի Ուաշըր քաղաքը կը հրատարակուէր, այժմ փոխադրուած է Պոսթոն: Նոյեմբեր 9ի քիչէն սկսեալ «Չայն Հայրենեաց»ը կը խմբագրուի «Նորակազմ Վարչութեան մը հոգածութեան ներքև»: Եւրոպայէրը կը ծանուցանէ թէ ինք «ամէն բանէ առաջ ազգային թերթ մըն է, բառին շայն իմաստովը ու շատագով պիտի հանդիսանայ այն ամէն ձեւնարկներուն եւ շարժումներուն որոնք հայրենեան զարգացման և բարեփոխման կը նպաստեն:»

Յոռուալիք ենք որ «Չայն Հայրենեաց» պիտի շարունակէ ուղղամիտ առաջնորդ մը ըլլալ Ամերիկայի հայ գաղթականութեան: Իր բարոյականովը եւ պարկեշտութեամբ պիտի չեզոքացնէ այն բոլոր շանքերը որոնք ի գործ կը դրուին ապակակելու համար Ամերիկայի հայ գաղթարը:

ՀԱՍՏԷ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ և 15ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգիր զրկել ա՛մ:

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W